



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Խմբագրական

### Գալիքին ընդառաջ՝ գալիքի գիտակցումով

Յուրաքանչյուր տարեվերջ անցնող տարվա ամփոփագիրն է, քանզի, որպես կանոն, ի մի են բերվում անցած տարվա հաջողություններն ու ձախողումները, կատարված աշխատանքներն ու այդ աշխատանքներից քաղված արդյունքները: Յուրաքանչյուր անցնող տարում, ինչպես միշտ, մի բան մնում է թերի կամ անկատար, որի ավարտն ակնկալվում է գալիք տարում: Այստեղ կարելի էրը նպատակալացություն է:

Թե ինչպիսին էր տարին Արցախի համար եւ ինչ սպասել գալիք տարուց, կարելի է յուրաքանչյուրիս համար, քանզի յուրաքանչյուրս պարտավոր ենք հետաքրքրված ու շահագրգիռ լինել Արցախի խնդիրներով, ձեռքբերումներով ու զարգացման հեռանկարներով:

Անշուշտ, երկրում զգալի աշխատանքներ կատարվեցին տնտեսական, հատկապես՝ թեթև արդյունաբերության, ենթակառուցվածքների, առողջապահության եւ մի շարք այլ բնագավառներում, ինչն, իհարկե, ողջունելի է, սակայն այս ամենն ակնկալում է շոշափելի շարունակություն, հետեւողական աշխատանքներ ու նոր ձեռքբերումներ, մանավանդ, որ գալիք տարին արդեն իսկ ունի իր մարտահրավերները:

2015-ն իր հետ բերում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Մի թիվ, որ խոսում է հարյուրամյա ոճրագործության անպատժելիության, ուստի եւ՝ նորանոր ոճրագործությունների հավանակալության մասին: Գաղտնիք չէ, որ Հայոց ցեղասպանության ճանաչման գործում հսկայածավալ աշխատանքներ են կատարում ՀՀ-ի Հայ Դատի գրասենյակները, որոնց օրակարգային հարցն է ոչ միայն Ցեղասպանության ճանաչումը, այլ դրանից բխող հատուցման պահանջը: Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում պահանջվում է համախմբվածություն ու միասնական պայքար՝ անկախ քաղաքական հայացքներից ու կողմնորոշումներից: Սա ամեն մի հայի խնդիրն է, եւ հարցի հաջող լուծման առաջին իսկ նախապայմանը մեր՝ Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունն է: Սա է աշխարհին ներկայանալու մեր անբախտելի միասնությունը, իսկ միասնությունը միշտ էլ հաղթանակ է ծնել:

2014-ին ՀՀ Դաշնակցությունը դարձավ 124 տարեկան. տարիներ, որոնք խոսում են հայոց ավանդական կուսակցության ամուր հիմքերի ու ամուր գաղափարախոսության մասին: Տարիներ, որ վաստակ են բերոշում, իրականացված աշխատանքների անհաշվելի հանրագումար. աշխատանքներ, որոնց ակունքը միշտ եղել ու մնում է հայ ժողովրդի բարորությունը: Ժամանակակից քաղաքական ու տնտեսական խմորումներում Դաշնակցության որդեգրած ուղեծիրը երբեք չի շեղվել: Այն միշտ տարել է դեպի համահայկական նպատակ, դեպի միասնական հայրենիք ստեղծելու եւ այդ հայրենիքում արժանավայել ապրելու հանգրվան:

Անուրանալի է ՀՀ-ի դերակատարությունն Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման եւ, առհասարակ, Արցախի աշխարհին ներկայացնելու գործում: Այս հարցը ՀՀ Դաշնակցության օրակարգային հարցերից է, նրա հայրենանպաստ աշխատանքների բաղկացուցիչ ու անտարանջատելի մասը: Այս առումով՝ գալիք տարում շատ ու շատ աշխատանքներ են սպասվում, եւ, անշուշտ, ունենք շոշափելի արդյունքի ակնկալիք:

Թող 2015 թվականը հայության համար ձեռքբերումների մի նոր էջ բացի եւ յուրաքանչյուր ազգանպաստ մտահղացում, ծրագիր կամ գաղափար իրականություն դառնա: Միասնական լինենք գալիքին ընդառաջ քայլելիս:



### «Դաշնակցություն» խմբակցության հայտարարությունը 2015թ. պետական բյուջեի մասին

Խորհրդարանն այսօր 29 կողմ, 2 դեմ ձայների հարաբերակցությամբ հավանության տվեց երկրի գլխավոր ֆինանսական փաստաթղթին:

Պատգամավորական խումբ-խմբակցությունները մինչ քվեարկություններով՝ կապված 2015 թվականի պետական բյուջեին հետ: Ստորեւ ներկայացնում ենք ԼՀԴ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության հայտարարությունը.

«ԼՀԴ-ի 2015թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ԼՀԴ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցությունը բոլոր տարիներին էլ փորձել է հիմնավորել, որ ոչ թե երկրի բյուջեն է նպատակ, այլ երկրի զարգացման ռազմավարական ծրագրերը, իսկ բյուջեն միջոց է այդ ծրագրերի իրականացման համար: Պետք է նշել, որ 2015թ. բյուջեի նախագիծը զուգակցվել է ավելի ընդգրկուն ծրագրերով եւ առավել ուշադրություն է դարձվել վերլուծություններին՝ տարբեր տարիների հետ համեմատած, չնայած վերոհիշյալ ուղղությամբ դեռեւս անելիքներ կան:

Դարձյալ շեշտում ենք, որ ծրագրերն են, որ քաղաքականությունը վերածում են համակարգային բարեփոխումների եւ հնարավորինս գերծ պահում անհատական որոշումներից: Ծրագրերի առկայության դեպքում է, որ բարեփոխումները համակարգային եւ լիարժեք են դառնում՝ յուրովի հանդիսանալով երկրի զարգացման խթանիչ ուժ:

Բոլորս ենք գիտակցում, որ ցանկացած բյուջե ոչ միայն զուտ տնտեսական, այլ նաեւ քաղաքական էություն պարունակող փաստաթուղթ է: Ելնելով դրանից՝ «Դաշնակցություն» խմբակցությունը հանդես է

ելել հինգ տասնյակից ավելի բանավոր եւ մոտ չորս տասնյակ գրավոր առաջարկություններով:

Առաջարկությունները հիմնականում վերաբերվում էին տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրներին, ՓՄՁ-ների սանդղակային ձեռք վարկավորմանը, հանքարդյունաբերությունից ստացված մուտքերին, վարչակառավարչական ծախսերի կրճատմանը, հայրենադարձության, ինչպես նաեւ ներքին միգրացիայի խնդիրներին, գյուղատնտեսության բնագավառին, մասնավորապես՝ կոպեքտով տնտեսությունների ձեւավորմանը, թեթեւ արդյունաբերության, բնապահպանական եւ բնօգտագործման վճարներին, տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները բարձրացնելու քաղաքականությանը, մշակույթի, սպորտի ոլորտներին, հիպոթեքային վարկավորմանը, առանձին ենթակառուցվածքների զարգացմանը, հարկային ոլորտին, մասնավորապես՝ շահութահարկին, առեւտրի հարկին եւ այլ բնագավառներին: Ներկա ժամանակաշրջանի սոցալտնտեսական կացությունը մեզ թելադրում է երկրի կառավարման համակարգում իրականացնել լավարկման (օպտիմալացման) քաղաքականություն:

Նշենք, որ մի շարք հարցերի վերաբերյալ առկա էր խմբակցության եւ կառավարության կարծիքների տարբերություն, բայց նաեւ ընդգծենք, որ ընդհանուր առմամբ հանդիպումներն անցել են կառուցողական մթնոլորտում:

2015թ. բյուջեի նախագիծը տրամաբանական շարունակությունն է 2014թ. բյուջեի:

### ՀՀ-ի Արցախի ԿԿ շնորհավորանքը Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ

Ավարտին մոտեցավ 2014 թվականը: Անցնող տարին հայ ժողովրդի եւ Արցախի համար լի էր կարեւոր իրադարձություններով: Այս տարի համաշխարհային ամենաթեժ հարթակներում տեղի ունեցած դեպքերն ու իրադարձությունները չէր չանցեցին հայկական աշխարհը:

Անցնող տարին լի էր աղբյուրաբան-դարաբանական հակամարտության սրացումներով: Ունեցանք անդառնալի կորուստներ, արձանագրեցինք հաջողություններ: Հաջողություններ, որոնք եւս մեկ անգամ դաս եղան հակառակորդին՝ ապացուցելով մեր ոգու, մեր կամքի անպարտելիությունը:

2014 թվականին միջազգային տարբեր հարթակներում զգալի աշխատանք տարվեց ԼՀԴ միջազգային ճանաչման ուղղությամբ:

2014 թվականը, ինչքան էլ դժվար, բայց եւ պատասխանատվությամբ է ամփոփում արցախցին:

Ինչպես գիտեք, ՀՀ Դաշնակցությունն ամենուր է՝ հայի աշխարհագրության մեջ, հայի խնդիրներով եւ հոգսերով:

2014-ն իր նվաճումներով ու կորուստներով, հաջողություններով ու անհաջողություններով արդեն անցյալում է: Առջեւում 2015-ն է՝ ոչ սովորական տարեթիվ մեր ժողովրդի համար: 2015-ը հայ ժողովրդի համար սթափության, պատասխանատվության, ոգեշնչման նոր փուլի մեկնարկի ազդարարն է լինելու:

Միտելի հայրենակիցներ, շնորհավորելով Ձեր Նոր տարին եւ Սուրբ Ծնունդը, մաղթում ենք ձեզ խաղաղ եւ արժանապատիվ կյանք, հաջողություններ ու նվաճումներ ձեր անձնական, ընտանեկան, գործնական կյանքում:

Թող հարատեւ լինի մեր ժողովրդի անկախությունը եւ պետականությունը. դա մեր բնականոն ապրելու գերճշտված բանաձեւն է:

Արդեն 124 տարի՝ ամեն օր հայ ժողովրդի խնդիրներով ապրում եւ այդ խնդիրների կարգավորման շուրջ պայքարում է ձեր հին եւ հավատարիմ ընկերը՝ Հայ Ցեղափոխական Դաշնակցությունը:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

### Աժ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավարն ամփոփում է անցնող տարին

**- Պարոն Սարգսյան, գաղտնիք չէ, որ Աժ «Դաշնակցություն» խմբակցությունն Աժ-ում աչքի է ընկնում իր ակտիվությամբ: Ամփոփելով 2014 թվականը՝ ի՞նչը կընդգծեիք, որո՞նք էին խմբակցության ձեռքբերումները:**

- Աժ «Դաշնակցություն» խմբակցությունն ամենամյա ծրագրի շրջանակներում կազմում է նաև եռամսյակային ծրագրեր, որոնցով էլ առաջնորդվում է: Կարող եմ հստակ ասել, որ բոլոր ուղղություններով կարողացել ենք կատարել մեր առջեւ դրված առաջադրանքները: Որպես առավել մեծ ձեռքբերում՝ կընդգծեի ժողովրդի հետ կապը, որովհետեւ մենք հանդիպումներ ենք ունենում բազմաթիվ համայնքներում: Միայն 2014 թվականին խմբակցությունն այդպիսի մի քանի տասնյակ հանդիպումներ է ունեցել: Մեզ համար շատ կարեւոր է ժողովրդի հետ անմիջական շփումը, քանի որ գտնում ենք, որ պատգամավորը պետք է ժողովրդի տրամադրությունները միանգամից ընկալի, նրանց խնդիրների մասին բարձրաձայնի, փորձի հարցերին լուծում գտնել: Օրինակ գազալցակայաններում գազի գնի իջեցումը եւ այլն: Իհարկե, պատգամավորի գործառույթները չի սահմանափակվում վերոհիշյալ ուղղությամբ, այլ այն բազմաբնույթ է: Իրականում, ճիշտ եք նկատել, մենք Աժ լիազումար նիստերի ժամանակ շատ աշխույժ էինք եւ տարբեր հարցադրումներ էինք ուղղում կառավարությանը: Ակտիվ ենք եղել նաև օրենքների նախագծերի քննարկումների ժամանակ, հանդես եկել տարբեր առաջարկություններով: Կարող եմ շեշտել նաև «Դաշնակցություն» խմբակցության կարգապահությունը: Աժ նիստերին խմբակցությունից գրեթե բացակայություններ չեն եղել: Խմբակցության ձեռքբերումներն առկա են բոլոր բնագավառներում եւ, կարելի է ասել, խմբակցությունը հիմնականում կատարել է բոլոր այն ծրագրերը, որոնք նախատեսված են եղել 2014 թվականին:

**- Խմբակցությունը, ինչպես նախորդ տարիներին, այժմ եւս շարունակում է ԼՂԶ բնակչության հետ արդեն ավանդույթ դարձած իր հանդիպումները: Հիմնականում բնակչությունն ի՞նչ հարցերով է դիմում խմբակցությանը եւ որքանով է հաջողվում այդ հարցերին համապատասխան լուծումներ տալ:**

- Բնակչությունը հիմնականում երկու տեսակի հարցեր է բարձրացնում. մի

մասն՝ անձնական բնույթի, իսկ մյուս մասը՝ տվյալ համայնքի հետ կապված: Բարձրացված հարցերին հիմնականում հաջողվում է լուծումներ տալ: Համայնքների հետ կապված հարցերը մենք բարձրացնում ենք տարբեր օղակներում, իսկ որոշ հարցերով խմբակցությունը գրավոր դիմում է կառավարությանը, որպեսզի այն ընդգրկվի բյուջեի մեջ: Այս առումով՝ համայնքային մի շարք հարցերի մեզ հաջողվել է լուծումներ տալ՝ կառավարության համապատասխան օղակների հետ համագործակցելով: Անձնական բնույթի բո-



լոր այն հարցերը, որոնք օրենքի շրջանակներում են եղել, հնարավորինս լուծումներ են տրվել:

**- 2014 թվականին ԼՂԶ Աժ-ն աչքի ընկավ մասնավորապես տարբեր երկրների խորհրդարանների հետ փոխայցելություններով: Խորհրդարանական մակարդակով տարբեր երկրների հետ ստեղծվեցին բարեկամական խմբեր: Այս առումով Աժ «Դաշնակցություն» խմբակցությունն ի՞նչ դեր ունեցավ:**

- ՀՀ Դաշնակցությունը շատ ակտիվ գործունեություն է ծավալում Արցախի ճանաչման գործընթացում: Այս առումով ՀՀ-ի Հայ Դատի մարմիններն առանձնապես սերտորեն համագործակցում են նախագահի, խորհրդարանի եւ արտգործնախարարության հետ: Կազմակերպվել են մի շարք հանդիպումներ ոչ միայն Հայ Դատի մարմինների կողմից, այլ նաև՝ հենց ԼՂԶ իշխանությունների ջանքերի շնորհիվ: Խորհրդարանի նախագահի ղեկավարած պատվիրակության կազմում, որ-

տեղ ընդգրկված են եղել խորհրդարանական երեք ուժերի ներկայացուցիչներ, Ֆրանսիայի Սենատում մասնակցել ենք պաշտոնական հանդիպման, որն, ի դեպ, որպես այդպիսին առաջինն էր: Հանդիպում է եղել նաև Ֆրանսիայի Ազգային ժողովում: Առայժմ ստեղծված են Աժ-ում Լիտվայի եւ Ֆրանսիայի հետ բարեկամական խմբերը, որտեղ, որպես բարեկամական խմբի անդամներ, «Դաշնակցություն» խմբակցությունից ընդգրկված են Վահրամ Բալայանը եւ Կամո Բարսեղյանը:

**- 2015 թվականի երկրի գլխավոր փաստաթղթի խորհրդարանական քննարկումներից հետո կառավարություն ներկայացված 47 առաջարկներից 37-ը «Դաշնակցություն» խմբակցությունն է արել: Հիմնականում ի՞նչ խնդիրներ են կարեւորվել այդ առաջարկություններում եւ քանի՞սն են ընդունվել:**

- Դաշնակցությունն առհասարակ շատ լուրջ է վերաբերում բյուջեի քննարկմանը, որովհետեւ դա այն փաստաթուղթն է, որը մեկ տարի ուղենշելու է երկրի զարգացումը եւ կարողանալու է իր մեջ ներառել տարբեր հարցերի լուծումներ: Խմբակցությունը հանդիպումների ժամանակ բանավոր ներկայացրել է հինգ տասնյակից ավելի հարցեր, իսկ գրավոր՝ մոտ չորս տասնյակ առաջարկություններ: Բյուջեի հետ կապված առաջարկությունները հիմնականում բաժանվում են երկու մասի: Մի մասը մարտավարական բնույթի առաջարկություններ են, որոնց մի մասը ժողովրդի հետ հանդիպումների ժամանակ

բարձրացված հարցերից են ծնվել եւ վերաբերում են մի շարք համայնքներում մանկապարտեզների կառուցմանը, խաթարված ջրագծերի վերանորոգմանը, աղբահանության ծրագրի ներդրմանը: Նաև՝ կրթության, մշակույթի ոլորտների վերաբերյալ մի շարք առաջարկություններ՝ գյուղական միջավայրում մշակույթի եւ սպորտի շենքերի կառուցման գործընթացում փոփոխություն կատարելու ուղղությամբ: Երեք շենք կառուցելու փոխարեն, որոնցից մեկն առանձին ծառայում է որպես հանդիսությունների տուն, մյուսն՝ առանձին դահլիճ, իսկ մյուսը՝ մշակույթի տուն, առաջարկել ենք այդ ամենը ամփոփել մեկ շենքի մեջ եւ կառուցել համապատասխան ճարտարապետական տեսքով, որի արդյունքում եւ շենքերի օգտակարության գործակիցը բարձի կլինի, եւ գյուղերում, չնչին ծախսեր կիրառելով, մեծ թափով կզարգանա սպորտը եւ մշակույթը:

Սակայն մեր առաջարկությունների առանցքային մասը ռազմավարական բնույթ է կրում, որով նախանշվում են երկրի զարգացման ուղղությունները, մասնավորապես՝ հարկային դաշտի բարելավման, հանքարդյունաբերության բնագավառում պետական վերահսկողության ուժեղացման, հիպոթեկային վարկավորման, պետական կառավարման ուժեղացված ապարատի կրճատման, արտահանման եւ ներմուծման անհամաչափությունը կրճատելու եւ այլ հարցեր: Այս հարցերով խմբակցությունն առանձին հանդիպում է ունեցել նաև երկրի վարչապետի հետ եւ այնպիսի քննարկել երկրի զարգացման տարբեր ուղղությունների վերաբերյալ մեր տեսակետները: Պետք է նշել, որ հայեցակարգային առումով եւ խնդիրների լուծման ուղղություններով խմբակցության եւ կառավարության մոտեցումների մեջ, հատկապես ռազմավարական բնույթի հարցերում, տարբեր ուղղություններ կան, բայց, ընդհանուր առմամբ, կառավարությունը դրական է մոտեցել մեր հարցադրումներին: Խնդիրը դրանց լուծման ժամկետների հետ է կապված: Խոստացել է համապատասխան ֆինանսի առկայության դեպքում լուծում տալ, իսկ հարցերի մի մասին անմիջապես լուծում է տրվել:

Դաշնակցություն խմբակցությունն առաջիկայում էլ հետամուտ եւ հետեւողական է լինելու վերոհիշյալ խնդիրների լուծմանը:

*Հարցազրույցը՝ Ասի ԱՍՏՅԱՆԻ*

### «Դաշնակցություն» խմբակցության հայտարարությունը 2015թ. պետական բյուջեի մասին

1 ← Ցավոք սրտի, այս տարի եւս բյուջեն ԼՂԶ Աժ է ներկայացվել 30 օր առաջ, չնայած, որ մենք միշտ բարձրացնում ենք այս հարցը եւ գտնում, որ այն պետք է ներկայացվի առնվազն 50 օր առաջ՝ առավել մանրամասն ուսումնասիրելու եւ շահագրգիռ քննարկումներ ծավալելու նպատակով:

ԼՂԶ Աժ «Դաշնակցություն» խմբակցության կարծիքով՝ 2015թ. բյուջեի նախագծում պահպանվել է պետական միջոցների սոցիալական ուղղվածությունը, նախատեսված է նաև աշխատավարձերի բարձրացում:

Նկատելի է նախատեսվող քայլերը ազատագրված տարածքներում գյուղատնտեսության զարգացման ոլորտում:

Ժամանակին մենք ողջունել ենք մեր անկախության տարիներին առաջին անգամ կառավարության ծրագրում տեղ գտած ապակենտրոն քաղաքականության որդեգրումը, որը կարեւոր ազդակ է նաև գյուղական համայնքների ինքնա-

բավության, իրական ինքնակառավարման եւ երկրի առավել ժողովրդավարացման հասնելու գործընթացում: Սակայն, մեր կարծիքով, համակարգային առումով վերոհիշյալ քաղաքականությունը դանդաղ է առաջանում:

Նախորդ տարիներին մեր կողմից բարձրացված՝ երկրի համաչափ զարգացման ուղղությամբ կառավարությունը որոշակի քայլեր է ձեռնարկել, բայց դեռեւս լուրջ անելիքներ կան վերոհիշյալ ուղղությամբ, մասնավորապես՝ վարկավորման բնագավառում:

Չնայած նկատելի է վերջին տարիներին պետական համակարգում վերահսկողական մեխանիզմների արմատավորումը, որը հիմնական գրավական է պետական միջոցների վատնումից խուսափելու համար, սակայն վերահսկողական մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ, մեր կարծիքով, դեռեւս լուրջ անելիքներ կան:

Գտնում ենք, որ անհրաժեշտ է ի հայտ եկած խախտումներն առավել թափան-

ցիկ ներկայացնել հանրությանը եւ կոնկրետ խախտումների համար պատասխանատուները պատասխանատվություն կրեն:

Մենք գտնում ենք նաև, որ կապիտալ շինարարության ծավալները եւ հուշարձանների վերականգնման համար նախատեսված գումարները պետք չէր այդ ծավալով կրճատել:

ԼՂԶ Աժ «Դաշնակցություն» խմբակցությունը 2015թ. բյուջեի նախագծում շեշտում է կառավարության դրական աշխատանքները սոցիալական, էներգոհամակարգի, նախադպրոցական կրթության, գյուղերում երիտասարդ ընտանիքների կողմից կառուցման գործընթացում ֆինանսական օժանդակության, գոհված ազատամարտիկների տների կառուցման եւ վերակառուցման գործընթացի առավել ակտիվ շարունակման, ԼՂԶ բնակավայրերում բնակիչներին շինակյութի տրամադրման, 2-րդ եւ 3-րդ կարգի հաշմանդամներին անտոկոս հիպոթեկային վարկի տրամադրման քա-

ղաքականությունը:

Չնայած տնտեսության եւ ԼՂԶ քաղաքացիների եկամուտների ավելացման հարցում առկա է որոշակի հաջողություններ, այնուամենայնիվ, ներկա մարտահրավերների եւ գնաճի պայմաններում, գտնում ենք, որ այդ ամենը բավարար չէ:

ԼՂԶ Աժ «Դաշնակցություն» խմբակցության կարծիքով՝ վերոհիշյալ մի շարք հարցեր կարելի է լուծել, եթե առավել ուշադրություն դարձվի ոչ միայն տեղային, այլև ռազմավարական նշանակության մի շարք տնտեսական ծրագրերի կազմմանը: Վստահ ենք, որ տվյալ դեպքում այն կմեղմի գործազրկության եւ սոցիալական ոլորտի մի շարք դժվարություններ:

Ելնելով վերոնշյալից՝ ԼՂԶ Աժ «Դաշնակցություն» խմբակցությունը 2015թ. պետական բյուջեի նախագծին քվեարկելու է «Կողմ»:

*ԼՂԶ Աժ «Դաշնակցություն» խմբակցություն*

# Ա. Աղաբեկյան. «ՀՀ-ն Արցախում է, որովհետև Արցախը դրա կարիքն ունեցել է եւ ունի»

- Երկու տարուց ավելի է, ինչ Դուք նշանակվել եք ԼՂՀ փոխվարչապետի պաշտոնում: Ծանոթ եք Ձեր կենսագրությանը՝ 7 տարի աշխատել եք որպես ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ եւ կյանքի եք կոչել ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք ծրագրեր: Փոխվարչապետի պաշտոնը որքանով նպաստեց, որ Դուք շարունակեք կյանքի կոչել Ձեր ծրագրերը:

- Փոխվարչապետ նշանակվելը ինչ-որ տեղ հանկարծակի էր ինձ համար, որովհետև երբեք մտքովս չէր անցել, որ կարող է նշանակվել այդ պաշտոնում եւ պատասխանատվություն ստանձնել ԼՂՀ կառավարությունում: Բայց այն, որ ոչ մի օր չեմ կտրվել Արցախից, լինի դա գորահրամանատար եղած ժամանակ, թե ՀՀ կառավարության տարածաշրջանային ինտեգրման վարչության պետի պաշտոնում, կամ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ լինելու ժամանակ, գիտեմ իմ հայրենակիցները, հարուստները, բոլոր նրանք, ովքեր առիթ առ առիթ շփվել են ինձ հետ: Մինչև այս պաշտոնում նշանակվելը, 2007-ից սկսած՝ հաճախ եմ քննարկումներ ունեցել Արցախի իշխանությունների հետ՝ կապված Արցախի սոցիալ-տնտեսական վիճակի, Արցախում իշխող տրամադրությունների հետ:

Պաշտոնը ստանալուց անմիջապես հետո նախանշել եմ այն աշխատանքների ուղղությունները, որ պետք է իրագործել: Ի պաշտոնե պարտականություններ կատարելը մեկ խնդիր է, մեկ այլ խնդիր է, որ շարունակվում էս քո անձնական կապերն օգտագործել՝ ի շահ քո երկրի: Դրանով էլ ավելի մեծ հնարավորություններ ես ունենում երկրում իշխանությունների առաջ ծառայած խնդիրները, ժողովրդի խնդիրները ներկայացնելու: Դա բավական բարենպաստ պայման է, երբ փորձում ես քո ընկերներին ներգրավել թե սոցիալական, թե այլ խնդիրների լուծման մեջ: Ի դեպ, ժամանակ առ ժամանակ հորդորում եմ արցախցի պաշտոնյաներին, որ իրենք ես օգտագործեն իրենց անձնական կապերը Արցախի հետ կապված ծրագրերի կյանքի կոչման գործում:

- Անցնող տարում ի՞նչ ծրագրերով եք հանդես եկել՝ որպես ԼՂՀ փոխվարչապետ: Որո՞նք են արդեն իսկ կայացած, եւ ի՞նչ ակնկալիքներ ունեք:

- 2012 թվականին սկիզբ դրված ծրագրերի մի մասն այսօր մտնում են ավարտական փուլ, մյուս մասն արդեն լավ հիմքերի վրա են: Կարելի է ասել՝ երկու տարիների իմ ծրագրերը հաջողվել են: Ուզում եմ բերել մի կարեւոր օրինակ. մենք առաջնորդվեցինք այն կոչով, որ սեփական բանակին կերակրելը պատվաբեր գործ է, եւ այդ պատվաբեր գործը կյանքի կոչելու համար կարողացանք մի շատ կարեւոր սկզբունք որդեգրել՝ համագործակցելով ՀՀ կառավարության հետ, ՊՆ-ի հետ առանձին քննարկումներ անելով: Այդ ձեռքբերումն այն է, որ այսօր ԼՂՀ ՊԲ-ին մատակարարվում է մի շարք սննդատեսակներ, որոնց ծագումն Արցախից է: Եթե երկու տարի առաջ այս մասին խոսելն անիթեթություն կարող էր թվալ, ապա այսօր արցախցու արտադրած տարեկան 350 տոննա միս է մատակարարվում ՊԲ-ին: 2014 թվականին նաեւ կարտոֆիլ եւ այլ բանջարեղեն է մատակարարվել: Այս ծրագիրը լինելու է շարունակական: Եթե Արցախում գտնվեն արտադրողներ, ովքեր կարող են բավարարել ՊԲ-ին մատակարարվող մթերքների ցանկը, ապա նրանց արտադրանքը սպառվելու է ՊԲ-ում:

Այս պայմանավորվածությունը, մասնավորապես ՀՀ կառավարության հետ, բերեց նրան, որ Ստեփանակերտում ստեղծվեցին հարյուրավոր աշխատատեղեր: Չինվորական հանդերձանքի, անկողնային պարագաների, հագուստի, կոշիկի արտադրությունը կանոնակարգված արտադրություններ են, բիզնես ծրագրեր, որոնք լծված են ամբողջ տարին ՊԲ-ին մատակարարելու: Մենք դեռ նոր առաջարկով հանդես ենք գալու: Ակնկալում ենք, որ 2015-ին 700 հազար գույք գույք պաներ բանակի համար արտադրվելու են հենց Արցախում:

Խրախուսելու ենք նաեւ այն նախաձեռնողներին, որոնք փորձելու են Արցախի բանակի համար արտադրել ուսապարկ եւ քնապարկ: Եթե չինացին կարող է արտադրել քնապարկ կամ ուսապարկ, ապա արցախ-

ցին դա ավելի որակյալ կանի:

Մյուսը՝ բիզնես միջավայրի նոր սկիզբ դնելն է. այդ նոր սկիզբը հաջողությամբ արդեն ընթանում է: 2015-ին մենք կավարտենք «Դարմետաքս կոմբինատ» նախագիծը: 15 հազ. քառ. մետր տարածք պետությունը տրամադրել է արտադրողներին: Այսօր այդ տարածքում հաջողությամբ գործում է 6 արտադրություն եւ աշխատում է 400-ից ավելի աշխատող: Այդ նախագիծը շրջանակում ուզում եմ կարեւորել արցախյան գորգագործության՝ որպես վերացվող մշակույթի վերածնունդը, որի պտուղներն արդեն տեսնում ենք:

2014 թվականի կարեւոր նախաձեռնություն էր Արաքսի հովտի ծրագիրը: 2012 թվականից մենք բավականին լուրջ ռեսուրսներ ենք ծախսել, որպեսզի Արաքսի հովտի հողատարածքները դարձնենք օգտագործման համար պիտանի: Գիտակցում էինք, որ էլ ավելի մեծ ներդրումներ անելու անհրաժեշտություն կա թե ջրագծերի կառուցման, թե ենթակառուցվածքների կառուցման ուղղությամբ: Տարածքը պիտի ներդրողների համար հետաքրքիր դառնա: 2014 թվականին լավ նախադրյալներ են ստեղծվել, որ-



պեսզի 2015-ին էլ ավելի գրավիչ լինի հողօգտագործողների համար: Այս առումով քաղաքացիության պակաս կա: Հողօգտագործողներին եւ ներդրողներին 2015 թվականին էլ ավելի լավ պետք է ներկայացվի Արաքսի հովտը: Ակնկալում եմ, որ ԼՂՀ նախագահի հորդորներն այս ուղղությամբ ավելի կակտիվացնեն «Արաքսի հովտ» նախագիծը:

Արաքսի հովտում աշխատանքներն «Արաքս» ՓԲԸ-ի կողմից շարունակվելու են նաեւ 2015-ին: Գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը հիմնելու է նաեւ այգիներ եւ վաճառվելու է բոլոր նրանց, ովքեր ի վիճակի են որպես ներդրող հանդես գալու, բայց ի վիճակի չեն լինել հողօգտագործող:

Արաքսի հովտի ծրագրերի իրականացումը կառավարության կարեւորագույն ծրագրերից է, եւ մենք անելու ենք ամեն ինչ, որ այն հասանելի լինի ողջ հայությանը:

Կարեւոր նախագծերից մեկն ազգային վիճակախաղի նախագիծն է, որը 2013 թվականի ծրագրի շարունակությունն է: Թյուրքմենում կա հասարակության մեջ, որ այդ վիճակախաղն ունի իրավիճակային նշանակություն: Ուզում եմ նշել, որ 2014 թվականը եզրափակվելուց հետո հանդես ենք գալու նոր առաջարկություններով, մասնավորապես՝ այսօր մասնագետները քննարկում են հիփոթեկային վիճակախաղով հանդես գալու հարցը:

Մենք գտնում ենք, որ մեր հայրենակիցներին պետք է հնարավորություն եւ ռեսուրս տանք նոր նախաձեռնություններով հանդես գալու՝ կլինի դա աշխատատեղերի ստեղծում, վերաբնակեցման աջակցություն, թե այլ ծրագրեր:

Կարեւոր ձեռքբերումներից էր նաեւ էներգետիկ հնարավորությունների ընդլայնումը: ԼՂՀ կառավարությունը շարունակելու է այդ բնագավառում իր աշխատանքները: Մենք դեռ էլեկտրաէներգիայի սպառման մեծ պահանջարկ ունենք. այդ առումով ողջունելի է ցանկացած նախաձեռնություն:

Անձնական կարեւոր նախաձեռնություն-

ներից մեկը, որ 2015 թվականին պետք է իրականություն դառնա, շրջակայքը մաքրելու, մաքուր միջավայր ձեւավորելու հետ է կապված: Մենք դեռ չենք կարողանում ճիշտ սանամաքում իրականացնել մեր համայնքներում: Այս առումով հանդես ենք ելել երկու թեղիքային ծրագրով: Նպատակ ունենք գյուղական համայնքներում համայնքի ուժերով կազմակերպելու աղբահանման ծրագիր, եւ գյուղական համայնքի բնակիչներն իրենց մասնակցությունը ցուցաբերեն այդ աշխատանքներին: 2015 թվականի բյուջեում ներգրավվել է 9 գյուղերում սանամաքում իրականացնելու վերաբերյալ ծախսային հոդված:

Համայնքների ղեկավարներից եւ բնակիչներից է կախված՝ արդյո՞ք ունենալու է այդ ծրագիրը շարունակյալ բնույթ այլ շրջաններում, թե՞ ոչ:

- Գիտե՞ք, որ բնակչության համար հատուկ ընդունելության օրեր եք նշանակել, եւ բնակիչները կարող են անձամբ իրենց մտահոգող հարցերը ներկայացնել ձեզ: Ի՞նչ հարցերով են հիմնականում դիմում բնակիչները:

- Փոխվարչապետ նշանակվելուց հետո նկատեցի, որ քաղաքացիները, տարբեր հարցերի հետ կապված, հաճախ են գալիս կա-

ռաջել: ՀՀ-ն, անկախության առաջին օրվանից սկսած, բարձրաձայն է, որ փոքր Հայաստանի համար ընդունելի է կառավարման խորհրդարանական ձեւը, որ իրականում ՀՀ-ի համար կիսանախագահական կառավարման ձեւն անընդունելի է: Ինչո՞ւ չէ, նաեւ լրիվ նախագահական ինստիտուցիոնալ ուղղահայաց ունի իր բացերը: Լավագույն տարբերակը խորհրդարանական կառավարման ձեւն է, երբ խորհրդարանում ընդգրկված պատգամավորներից յուրաքանչյուրն առանձին-առանձին պատասխանատվություն է ստանձնում երկրի կառավարման գործում: Այս ամենը գեղեցիկ է, իրականապես, եթե այդ խորհրդարանը քաղաքական խորհրդարան է:

Եթե խոսենք Արցախի մասին, ապա այս առումով մենք չպետք է անմասն մնանք ՀՀ-ում ընթացող քննարկումներից, որովհետեւ ՀՀ-ի յուրաքանչյուր նախաձեռնության հիմքում ընկած է միացյալ Հայաստան ունենալու նպատակը:

Սահմանադրական պահանջ է, որ 2015 թվականին Արցախը պետք է ունենա մասնագիտական խորհրդարան: Այս պետք է գիտակցի մեր հասարակությունը:

- 2015 թվականը քաղաքական տարի է, առջեւում խորհրդարանական ընտրություններ են: Ի՞նչ ծրագրեր եւ ակնկալիքներ ունեք՝ որպես ՀՀ-ի ԿԿ անդամ:

- Իրականում հարցը ճիշտ էք ձեւակերպում այն առումով, որ մինչև փոխվարչապետ նշանակվելն իմ գործունեությունը մի կողմից պայմանավորված էր որպես դաշնակցական, մյուս կողմից, մաս կազմելով տեղի կառույցին, մեծ առնչություն չեմ ունեցել կառույցի՝ ԿԿ խնդիրների կյանքի կոչմանը: Սակայն, ի պաշտոնե աշխատելով Արցախում, արդեն կամ թե ակամ գործում ես այդ ուղղահայացում: ԿԿ անդամ ընտրվելուց հետո կուսակցության գործունեության մեջ հստակ պարտականություններ եմ ստանձնել, որը եւ ուրախալի, եւ պատասխանատու գործ է:

Այն ոգին, որով ՀՀ-ի Արցախի ԿԿ-ն գործել է 1991 թվականին, երբ Արցախը շրջափակված էր եւ ամբողջ պատասխանատվությունն ընկած էր Արցախի կառույցի վրա, առանձնապես չի փոխվել: Ժամանակներն անցել են, խնդիրները վերանայվել են, բայց ինչ առաքելությամբ ՀՀ-ն գործել է Արցախում, նույն առաքելությամբ պետք է շարունակի գործել՝ համագործակցելով տեղի կուսակցությունների հետ, մասնակցելով համապետական նշանակության բոլոր քաղաքական միջոցառումներին, ԱԺ ձեւավորմանը:

Ժամանակին կես կատակ, կես լուրջ առում էի՝ Արցախի հասարակությանը «Ազատություն կամ մահ» նորից մատուցելու անհրաժեշտություն կա: Արցախցիները «Ազատություն կամ մահ» հաճախ շփոթում են վաղը պատերազմ սկսելու ցանկության հետ: Այս առումով, ԿԿ անդամ լինելով, կրկին բարձրաձայնում եմ, որ ՀՀ-ն Արցախում է, որովհետեւ Արցախը դրա կարիքն ունեցել է եւ ունի: Մենք անելիքներ ունենք Արցախում, եւ մեր անելիքները մեր հասարակության ամենօրյա, երկարաժամկետ եւ համահայկական նշանակության խնդիրների լուծումն է:

- 2015-ին ի՞նչ կմաղթեիք Արցախի հասարակությանը եւ Արցախին:

- 2014 թվականը ծանր տարի էր, որովհետեւ հակառակորդը ժամանակ առ ժամանակ փորձում էր ահաբեկել մեր հասարակությանը: Փառք հայությանը, որ կարողացավ ես մեկ անգամ ապացուցել, որ հաստատական է իր որոշումներում: Պետք է շնորհակալ լինենք իրարից եւ մաղթենք, որ 2015 թվականին ունենանք կամք, կարողություն եւ համբերություն, որպեսզի Արցախը կարողանա դիմակայել ինչպես տակտիկական նշանակության մարտահրավերներին, այնպես էլ շարունակի կառուցած մնալ իր հողին, որպեսզի միջազգային հանրությունը գիտակցի, որ արցախցին հաստատական է, որպեսզի մի օր տարածաշրջանում իշխի խաղաղությունը:

Ցանկանում եմ ընտանեկան երջանկություն յուրաքանչյուր արցախցու: Կատակ եմ դա այն ամուր հենքն է, որ եղել է դարեր առաջ, հիմա եւ ընդմիջտ:

### Խորհրդարանական ընտրությունները կկայանան մայիսին

ԼՂՀ խորհրդարանական ընտրությունները կկայանան 2015թ. մայիսի առաջին տասնօրյակում՝ հրավիրված մամլո ասուլիսի ժամանակ տեղեկացրել է ԿԸՀ նախագահ Սրբուհի Արզումանյանը: Ըստ ընտրական նոր օրենսգրքի՝ համամասնական եւ մեծամասնական մանդատների փոփոխություն է կատարվել: Ս.Արզումանյանի հավաստմամբ՝ մինչ օրենքի ընդունումը կազմակերպվել են քննարկումներ, եւ հարցը թողնվել է քաղաքական ուժերի հայեցողությանը: Նախկին օրենքում եղել է 17 համամասնական եւ 16 մեծամասնական հարաբերակցություն, իսկ նոր օրենքով կգործի 22/11 հարաբերակցությունը:

Փոփոխության է ենթարկվել նաեւ նվազագույն շեմի հաղթահարումը: Նախկինում կուսակցությունների համար գործող 6 տոկոսի եւ դաշինքների համար գործող 8 տոկոսի փոխարեն՝ նոր օրենսգրքով համապատասխանաբար 5 եւ 7 տոկոս շեմի հաղթահարում է սահմանվել:

Կուսակցությունների ընտրական ցուցակներում թեկնածուների նվազագույն եւ առավելագույն թիվ է սահմանվել՝ 5 եւ 66: Սրբուհի Արզումանյանի հավաստմամբ՝ նվազագույն թիվ սահմանելու միջոցով նվազեցվում է այն ռիսկը, որ կոնկրետ ցուցակով հանդես

եկող ուժը կարող է ցուցակում առկա թեկնածուների թվից ավելի մեծ թվով մանդատներ ստանալ կամ չկարողանալ լրացնել ազատ մանդատներն ԱԺ պաշտոնավարման ժամկետի ընթացքում: Իսկ առավելագույն սահմանա-



չափ կիրառվում է՝ ելնելով զուտ գործնական նկատառումներից:

Ս. Արզումանյանը տեղեկացրեց նաեւ, որ նոր ընտրական օրենսգրքում փոփոխության է ենթարկվել թեկնածուների առաջադրման ցուցակներում կանացի ներգրավվածությունը: Սկսած

ցուցակի երկրորդ համարից՝ յուրաքանչյուր հնչյակում պետք է կին թեկնածու ներկայացված լինի: Տվյալ ցուցակում ներկայացված թեկնածուների 20 տոկոսը պետք է կանայք լինեն:

ԿԸՀ նախագահը ասուլիսում խոսեց

ընտրությունների համար: Ու այդ ընթացքում տարբեր շահագրգիռ անձանց, կազմակերպությունների ու պետական կառույցների, ինչպես նաեւ արտերկրից հրավիրված դիտորդների կարծիքների, առաջարկությունների հաշվառմամբ՝ անհրաժեշտություն առաջացավ ավելի կատարելագործված ԸՕ ունենալու, որին պատրաստակամ ու դրական արձագանքեցին թե խորհրդարանական եւ թե արտախորհրդարանական քաղաքական ուժերը»:

Ամփոփելով 2014 թվականի ԿԸՀ գործունեությունը՝ Ս. Արզումանյանը նշեց, որ անցնող տարին ընտրությունների առատությամբ չի առանձնացել, սակայն նշեց, որ 2014-ին տեղական հանրաքվե է կայացել. «ԼՂՀ կառավարության որոշման համաձայն՝ 2014 թ. հունիսի 20-ին նշանակվեց Մարտունու շրջանի ճարտար եւ Ղուզե ճարտար համայնքները միավորելու վերաբերյալ տեղական հանրաքվեներ, եւ ճարտար-ցինների մեծ մասը՝ 90 տոկոսից ավելին, համաձայնեց 2 համայնքների միավորմանը: Արդյունքում՝ 2015թ. հունվարի 18-ին նույն համայնքում պետք է ընտրեն քաղաքապետ եւ քաղաքային համայնքի ավագանի»:

Ա.Ա.

### Կայացավ Արցախի ազատամարտիկների միության 6-րդ համաժողովը

Օրերս Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատում կայացել է Արցախի ազատամարտիկների միության 6-րդ համաժողովը: Մինչեւ համաժողովի սկսվելը ԱԱՄ վարչության անդամները եւ պատվիրակությունների ներկայացուցիչներն այցելել են Ստեփանակերտի հուշահամալիր, հարգանքի տուրք մատուցել Արցախյան գոյամարտում նահատակված ազատամարտիկների հիշատակին:

Համաժողովին ներկա է եղել Արցախի Հանրապետության նախագահ Բ.Սահակյանը, Արցախի թեմի առաջնորդը, կառավարության անդամներ, ԱԺ պատգամավորներ, ՊԲ զինծառայողներ, հասարակական եւ քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Նախագահ Բ.Սահակյանն իր ելույթում բարձր է գնահատել ազատամարտի վե-

տերանների եւ կազմակերպության դերակատարությունը պետականաշինության ու երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում: Նախագահն իր ելույթում ընդգծել է, որ ազատամարտիկների առողջության պահպանմանը, սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանն ուղղված աշխատանքները մշտապես գտնվում են իշխանությունների ուշադրության կենտրոնում:

Խոսելով Ազատամարտիկների միության եռամյա գործունեության մասին՝ ԱԱՄ նախագահ Սամվել Կարապետյանը նշել է, որ կազմակերպության երեք տարիների գործունեությունն արդյունավետ է եղել: Նրա խոսքերով՝ միության շարքերը համալրվել են 1013 նոր անդամներով, որի արդյունքում՝ ԱԱՄ-ը ներկայումս ունի շուրջ 9849 անդամ: Ս.Կարապետյանը ներկայացրեց նաեւ կազմակերպության

ֆինանսական կարողությունները՝ նշելով, որ շնորհիվ պետական, բարեգործական եւ անհատական նվիրատվությունների՝ զգալիորեն կարգավորվել է ԱԱՄ ֆինանսական վիճակը:

Ս. Կարապետյանը նշել է նաեւ, որ Արցախի ազատամարտիկների միության գլխավոր նպատակը եղել է մուծել երկրի հզորացմանն ու անվտանգության ապահովմանը նպաստելը: Ի դեպ, Երեւանի քաղաքապետարանի աջակցությամբ առաջիկայում ԱԱՄ վարչական շենքի հարեանությամբ կկառուցվի զբոսայգի:

Վերջին երեք տարիների ընթացքում իրականացված գործընթացների մասին մանրամասն հաշվետվությամբ հանդես է եկել միության աշխատակազմի ղեկավար Էդիկ Խաչատրյանը:

Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունը ներկայաց-

րել է հանձնաժողովի նախագահ Արմեն Սարգսյանը:

ԱԱՄ 6-րդ համաժողովի միաձայն որոշմամբ՝ միության երեքամյա գործունեությունը գնահատվել է բավարար: Համաժողովի ընթացքում կայացել է ԱԱՄ վարչության եւ վերահսկիչ հանձնաժողովի ընտրություն: ԱԱՄ 3 հոգուց բաղկացած վերահսկիչ հանձնաժողովի նախագահ է վերընտրվել Արմեն Սարգսյանը:

Գումարվել է ԱԱՄ վարչության առաջին սիստը, որի արդյունքում ԱԱՄ վարչության նախագահ է վերընտրվել Սամվել Կարապետյանը:

Համաժողովի վերջում մի խումբ ազատամարտիկներ արժանացել են պետական պարգևների:

Սեֆ.ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### «Նիկոլ Դուման» գրքի շնորհանդեսն Արցախում



Դեկտեմբերի 23-ին Ստեփանակերտի «Եվրոպա» հյուրանոցի դահլիճում տեղի ունեցավ Համետ Գեորգյանի «Նիկոլ Դուման» վերահրատարակված գրքի շնորհանդեսը: Ընտրանդեսին մասնակցում էին ՀՀ Կրթության ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, ԼՂՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը, ուժային

կառույցների ղեկավարներ, ԱԺ պատգամավորներ, կառավարության անդամներ եւ մտավորականներ:

Նիկոլ Դումանի մահվան 100-րդ տարելիցին նվիրված գիրքը վերահրատարակվել է Արեւմտյան Ամերիկայի ՀՕՄ-ի շրջանային վարչության գործավար Ժասմեն Բունիայանի հովանավորությամբ, իսկ Ստեփանակերտում գրքի շնորհանդեսը կազմակերպել էր ՀՀ Կրթության Կենտրոնական կոմիտեն:

Համետ Գեորգյանի «Նիկոլ Դուման» գիրքը նվիրված է Հայ ազգային- ազատագրական պայքարի նշանավոր գործիչ Նիկոլայոս Տեր-Հովհաննիսյանին (Նիկոլ Դուման):

Գրքի հեղինակը հայրենական պատմագրության մեջ առաջին անգամ արխիվային նորահայտ վավերագրերի,

հուշագրությունների, մենագրությունների ուսումնասիրությամբ եւ օգտագործմամբ ներկայացրել է Նիկոլ Դուման ազգային գործիչի հսկայածավալ ու հայրենանվեր գործունեությունը:

Այս տարվա սեպտեմբերի 28-ին է լրացել Հայ ազգային- ազատագրական պայքարի եւ ՀՀ Դաշնակցության նվիրյալներից մեկի՝ Նիկոլ Դումանի մահվան 100-ամյա տարելիցը: Պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Վահրամ Բալայանի գնահատմամբ՝ կատարված աշխատանքն այժմեական է մանավանդ մեզ՝ արցախցիներին համար. «Նիկոլ Դումանի կատարած գործն այսօր էլ ապրում է հայության մեջ, մեր գինվորների մեջ, եւ դրա արդյունքն է, որ մենք կարողանում ենք պետականություն ունենալ եւ սահման պահել»:

Համոզված եմ, որ օրեցօր ավելի շատ խոսելով այդ մարդկանց մասին՝ մենք

արժեւորում ենք այդ մարդկանց: Հարգանքի տուրք մատուցելով Նիկոլ Դումանին՝ մեր երախտիքի խոսքը պետք է հղենք այն բոլոր նահատակներին, ովքեր իրենց կյանքը նվիրաբերել են հայրենիքին, ազգային պետականություն ունենալուն»:

«Որպես պատմաբան՝ մեր ժողովրդին ներկայացրել եմ Նիկոլ Դումանին, - aparaj.am-ի հետ զրույցում նշեց գրքի հեղինակը եւ հավելեց, - Դումանին հնարավոր չէ որեւէ մեկի հետ համեմատել. նա իսկապես մեծություն է»:

Հեղինակի խոսքերով՝ գրքի ընթացողների հիմնական բացահայտումը լինելու է այն, որ հզոր ազգ ունենալու համար պետք է օրինակ վերցնել Նիկոլ Դումանից: Դումանի կերպարը կարող է օրինակ ծառայել, թե ինչպես պետք է երկիր ղեկավարել՝ ապահովել եւ հզոր հայրենիք ունենալու համար:

Ա. ԱՆՍԱՅԱՆ

## Իշխանաձորում կառուցվող 10 բնակելի տների աշխատանքներն ավարտվում են

Արցախի առաջին ազգային վիճակախաղից ստացված հասույթի մի մասն ուղղվել է Իշխանաձորում նոր թաղամասի կառուցմանը: Գյուղում բնակելի տների կառուցման աշխատանքներն սկսվել են 2014 թվականի մայիսին: Առաջին 10 բնակելի տների կառուցման աշխատանքներն արդեն ավարտվում են: Նախատեսված է ընդհանուր առմամբ 37 բնակելի տուն կառուցել: Շինարարներն էլ վստահեցնում են՝ 2015 թվականի փետրվարին բնակելի տներն արդեն պատրաստ են լինելու:

10 բնակելի տներ երեք սենյականոց են, յուրաքանչյուրն ունի 1.2 հա տնամերձ հողատարածք: Տները կառուցվել են ժամանակակից պայմաններին համապատասխան: Շինարարությունն իրականացնում է «Հաբանո»

ընկերությունը:

Աշխատանքներն իրականացնում է «Իշխանաձոր» ՍՊԸ-ի ղեկավար Արսեն Թեյլալյանը: Գործընկերներն արդեն ավարտվել է:

Շինարարական աշխատանքներին ընդգրկված են մոտ 40 շինարարներ՝ հիմնականում Գորիսից եւ Իշխանաձորից:

Ինչպես համայնքի ղեկավար Արսեն Թեյլալյանը է նշում՝ Իշխանաձորում վերաբնակվելու ցանկություն ունեցողների թիվը մեծ է: Ցանկացողներ կան 33-ի տարբեր շրջաններից, Ռուսաստանից, ինչպես նաև՝ սիրիահայեր: Բնակիչների խնդիր չունեն: Եկողները շատ են. հիմնականում երիտասարդ եւ աճող ընտանիքներ են:

«10-ից ավելի հայտեր ունենք: Զառաջադի շրջանից ցանկացողներին բնակարան չենք

տրամադրում. ներքին միգրացիան անիմաստ ենք համարում: Ավելի լավ է ուրիշ տեղերից գան», - նշեց նա:

ԼՂՀ ազգային վիճակախաղի տնօրեն Ալեքսանդր Արզումանյանի խոսքերով՝ թե իրենք, թե ԼՂՀ քաղաքաշինության նախարարությունը ամբողջությամբ հսկում են Իշխանաձորում կատարվող նշյալ շինարարական աշխատանքները՝ վստահեցնելով, որ օգտագործում են լավագույն որակի շինանյութեր: Իսկ թե այս տարի քանի տուն կկառուցվի՝ կապված է ազգային վիճակախաղի այս տարվա արդյունքներից:

Իշխանաձորն ունի նպաստավոր պայմաններ հողագործության եւ անասնապահության համար: Գյուղամիջով հոսում է Հաբանոյի գետը, ինչն էլ հնարավորություն է տալիս

ոռոգել այգիներն ու ցորենի արտերը: Համայնքի ղեկավար Արսեն Թեյլալյանը հավաստում է՝ լավ գյուղատնտեսող 3-4 տարի հետո կարող է բավականին լավ բերք ստանալ: Գյուղատնտեսական մթերքների պահանջարկ կա. շուկան ազատ է, գյուղացիները կարողանում են սպառել իրենց արտադրանքը:

Իշխանաձորում հայերն ապրում էին դեռ նախախորհրդային ժամանակներում: Խորհրդային տարիներին արդեբեշանցիներով է բնակեցվել, ինչի արդյունքում՝ բազմաթիվ հայեր լքել են գյուղը: Արցախյան պատերազմի ժամանակ գյուղն ազատագրվեց, եւ այժմ այն ակտիվ կերպով վերաբնակեցվում է:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

## Արցախում հաստատված սիրիահայերը խոսում են իրենց երազանքների մասին



2014 թվականի ապրիլին Սիրիայի Ռասուլայեյն գյուղից տեղափոխվել է Հաբանոյի անմիջապես հաստատվելով Բերձորում:

Արա-Սեպուհ Բեշիշյանն առաջին անգամ Բերձորում եղել է 2004 թվականին՝ ցանկանալով հող գնել եւ տեղափոխվել հայրենիք: Գործերը ձախողվել են եւ չի կարողացել տեղափոխվել:

Մասնագիտությամբ դերձակ է, սակայն երկար տարիներ Սիրիայում զբաղվել է հողագործությամբ եւ անասնապահությամբ: Արցախում 20 հա հող են տրամադրել հողագործությամբ զբաղվելու համար, սակայն վարկ ստանալու գործընթացն ուշացել է, որի պատճառով այս տարի չի կարողացել հողը մշակել:

Բերձորի շրջվարչակազմը նրանց անմիջապես 3 սենյականոց բնակարան է տրամադրել:

Այժմ թե Արա-Սեպուհը, թե կինը մշտական գործ չունեն: Ինչպես պարոն Արա-Սեպուհն է նշում՝ ամեն գործ անում է. կարեւորը՝ ընտանիքն ապահովելն է:

Չնայած պատկառելի տարիքին՝ Արա-Սեպուհը ֆիզիկական տարբեր աշխատանքներ է կատարում՝ շինարարությունից մինչեւ հո-

ղագործություն:

«Նպաստներ ստանում ենք, սակայն միշտ սպասել որեւէ մեկի օգնությանը՝ սխալ է: Ամեն մարդ ինքը պիտի մի բան ստեղծի: Մենք այս երկրի մի մասնիկն ենք մեզ զգում, եւ չենք ուզում միշտ խնդրողի կամ պահանջողի դերում գտնվել: Պարզապես պետք է կառավարությունն այնպիսի պայմաններ ստեղծի, որ գործ ունենանք, կարողանանք ինքներս մեր ապրուստը վստահեցնել», - նշեց նա:

Արա-Սեպուհ Բեշիշյանը բացառում է որեւէ երկիր տեղափոխվելու տարբերակը: Նա շեշտեց, որ ցանկանում է՝ իր զավակները հայրենի դաստիարակվեն, հայկական միջավայրում ապրեն:

Խոսելով գալիք տարվա պլանների եւ երազանքների մասին՝ պարոն Արա-Սեպուհը նշեց, որ մեծ հույս ունի, որ կկարողանա գալիք տարում իր հողը մշակել եւ բերք ստանալ: Ինքն էլ ունի Նոր տարվա իր երազանքը, որը, կարծում ենք, այնքան էլ մեծ բան չէ: «Կցանկանայի կով ունենալ, քանի որ տանը երկու երեխա ունեմ. թարմ կաթ ու մածուն ունենալը չէր խանգարի», - ասաց նա:

Նոր տարվան պատրաստվում են ունեցած միջոցների համապատասխան: Նա հավատում է, որ տարին ինչպես դիմավորես, այնպես էլ կանցնի:

«Թող պատերազմ չլինի աշխարհի ոչ մի երկրում, մնացած խնդիրները լուծելի են», - նշեց հավատով:

Բացի այս ընտանիքից՝ արդեն երկու ամիս է, ինչ Իշխանաձորում են նաեւ սիրիահայ Աբրահամ եւ Երանուհի Դեգիրմենջյանները:

Նրանք Սիրիայից տեղափոխվել են Երեւան, ապա՝ Իշխանաձոր: Երկու զավակները Լիբանանում են, մյուս երկուսը դեռ Սիրիայում են:

Իշխանաձորի գյուղապետարանը նրանց անմիջապես բնակարան է տրամադրել «Թուֆենկյան» եւ «Զառաթաղ» բարեգործական հիմնադրամների կողմից կառուցված բազմաբնակարան շենքում:

Պարոն Աբրահամը մասնագիտությամբ ավտոմեխանիկ է, սակայն հիմա մասնակցում է գյուղի շինարարական աշխատանքներին: Ասում է՝ գործ միշտ լինում է, քանի որ գյուղում միանգամից մի քանի շինարարություններ են իրականացվում:

Խոսելով գալիք տարվա պլանների եւ երազանքների մասին՝ պարոն Աբրահամը նշեց. «Չավակներս, արդեն երկրորդ տարին է, չեմ տեսնում, իսկ Սիրիայում մնացած երկու տղաներիցս 4 ամիս է, ինչ լուր չունեմ: Երազում եմ, որ գալիք տարում ընտանիքս միավորվի, բոլորս միասին լինենք, ապրենք այստեղ՝ Արցախում: Ցանկություն ունեմ մեքենաների վերանորոգման սեփական կետ բացել, մասնագիտությամբ աշխատել»:

Պարոն Աբրահամը պատմեց, որ Արցախում իրենց շատ լավ են զգում. մարդիկ բարեհամբույր են, եւ իրենք էլ իրենց արդեն արցախցի են զգում:

«Օտարություն մեջ ապրող հայի համար ավելի մեծ երջանկություն չկա, քան հարազատ հայրենիքում ապրելը», - ասաց նա:

Ա.ՆԱՐԻՆՅԱՆ

## Թող մանկանա մանկությունը

Յուրաքանչյուր երեխա աշխարհ է գալիս Աստուծո կամոք, ուստիե յուրաքանչյուրն ունի իր անցնելիք ուղին, իր առաքելությունը: Մանկության տարիները մեծ նշանակություն ունեն յուրաքանչյուրիս կյանքում: Երջանիկ մանկություն ունենալը մեծապես նպաստում է առողջ անհատի ձեւավորմանը: Եթե երեխայի մանկության գույներն աղավաղվում են, նրա ժպիտը դառնում է անկույն, նրա մանկությունն այդպես էլ չի մանկանում...

Ստեփանակերտի «Երեխաների խնամքի եւ պաշտպանության» թիվ 1 գիշերօթիկ հաստատության երեխաների աչքերում ուրախության կայծեր երեւաց, երբ իմացան, որ Նոր տարվա շեմին իրենց այցելության են եկել, այս անգամ՝ Հայ օգնության միության Արցախի միավորի ՀՕՄ-ուհիները եւ «Ղարաբաղ կարպետ» ընկերության տնօրինությունը:

Սովորաբար, տոնական օրերին շատերն են այցելում նրանց, նվերներ մատուցում, սակայն ամեն մի այցելություն նրանց համար յուրովի ուրախություն է, յուրովի տուն:

Գիշերօթիկում այսօր կան 22 երեխաներ՝ 14 աղջիկ եւ 8 տղա: Դահլիճի մեծ տոնածառն ու ամանորյա զարդարանքները վկայում են, որ նրանք նախապատրաստվում են նմանորին:

ՀՕՄ-ի Արցախի միավորի ատենապետուհի Արմինե Հարությունյանը ՀՕՄ-ուհի-

ների անուկից շնորհավորեց նրանց գալիք Նոր տարվա կապակցությամբ եւ յուրաքանչյուրին փոքրիկ նվերներ հանձնեց: Երեխաներին ամանորյա նվերներ փոխան-



ցեց նաեւ «Ղարաբաղ կարպետ» ընկերության տնօրեն Սեւակ Խաչատրյանը:

ՀՀ Դաշնակցության Արցախի կառույցը նույնպես նվերներ էր ուղարկել երեխաներին:

«Միշտ հիշեք, որ ձեզանից յուրաքանչյուրի մեջ է այս երկրի՝ Արցախի աշխարհի ապագան: Ձեզանից ամեն մեկն այդ ապագայի կերտողն է, ուստի՝ ապրեք այն գի-

Երեխաները, սկզբում ամաչկոտությամբ, ապա արդեն անմիջականորեն հայտնեցին իրենց ամանորյա երազանքների եւ Ձմեռ պապին գրած նամակների մասին: Երեխաներից յուրաքանչյուրն իր երազանքն ունի, նրանք հավատում են, որ եթե Նոր տարվա գիշերը երազանք պահեն, անպայման այն կիրականանա: Ոմանք բարձրաձայնեցին իրենց ցանկությունները, ոմանք՝ համեստաբար լռեցին: 12-ամյա հաչիկը, օրինակ, երազում է դիոլի դառնալ, Նունեն՝ երգչուհի, մեկ ուրիշը՝ մոդել: Իսկ Լուսինեն, որ աշխույժ ծանոթություն էր հաստատում բոլորիս հետ, մի պահ տխրեց, երբ հարցրինք նրա երազանքների մասին: «Ուզում եմ շուտ մեծանալ եւ տարեց պապիկիս խնամել: Պապս հիվանդ է, խնամող չունի»:

Գիշերօթիկ հաստատության երեխաներն իրենց շնորհակալությունն ու ուրախությունն արտահայտեցին երգերով ու ասմունքով:

Թող այս Նոր տարում Արցախի եւ աշխարհի բոլոր մանուկների համար Ձմեռ պապիկի (որին բոլորս էլ գոնե մի քիչ հավատում ենք) հեքիաթն իրականություն դառնա: Գո՛ւցե դրանով շատ ու շատ մանուկների կիսատ-ծվատ մանկությունը կմանկանա փոքրիշատե...

Դերմինե ՄԱՍԻՍՅԱՆ

### Հայրենիքից հեռու՝ հայրենիքի սիրով լեցուն



Երագիկ Հարությունյանը ճակատագրի բերումով ապրում է Ռուսաստանի Ղաշուղի շրջանի Կրասնոդար քաղաքում, սակայն ծնունդով Արցախից է, ծնվել ու մեծացել է Աշան գյուղում: Երագիկն Արցախում հայտնի բանահավաք, բանաստեղծ, վաստակավոր ուսուցիչ Լեւոն Հարությունյանի դուստրն է: Դուստրը հորից ժառանգել է ոչ միայն ստեղծագործելու բնատուր ձիրքը, այլև այն անկեղծ ու մեծ սերը, որն ուներ հայրն առ հայրենիք: Այդ սերը Երագիկն իր մեծագույն հարստությունն է համարում, որը, ի տարբերություն շատերի, թեև հայրենիքից հեռու, արտահայտում է իր գործով ու ապրելակերպով:

Երագիկի ջանքերով Կրասնոդարում 2007 թվականին հիմնադրվել ու մինչ օրս գործում է Հայոց Թեմի «Արմատ» դպրոցը, որի ստեղծմանն աջակցել են Հարավային Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Մովսես Մովսեսյանը, բարերարներ Անդրեյ Ամոսովն ու Կարեն Գրիգորյանը: Դպրոցի առօրյան հագեցված է լիարժեք դասերով, ճանաչողական եւ հայրենասիրական միջոցառումներով, հետաքրքիր նախաձեռնություններով: Աշակերտները մասնակցում են համահայկական բոլոր միջոցառումներին, աշխատում հաղորդակից դառնալ հայրենիքի կյանքին եւ հոգսերին:

**- Հարգելի Երագիկ, գիտե՞ք, որ դեկավարում եք Հարավային Ռուսաստանի Հայոց թեմի «Արմատ» դպրոցը: Ի՞նչ դեր ու նշանակություն ունի դպրոցը հայապահպանության գործում:**

- Անառարկելի ճշմարտություն է, որ Սփյուռքում հայապահպանությունը կարևորագույն խնդիր է բոլոր շահագրգիռ կառույցների եւ մարդկանց համար: Եվ դա ինքնանպատակ է: Հոգեկերտվածքով, լեզվով եւ կենցաղավարման կերպով հայ մնալով՝ մարդը պետք է կարողանա հոգեւոր կամ նյութական աջակցություն ցույց տալ հայրենիքին եւ չբացառել երբեք վերադարձի հնարավորությունը, այլապես նա կորած է հայկական աշխարհի համար: Չեմ կարող ասել, որ իրավիճակը բավարարում է, քանի որ Կրասնոդարում ապրող հարյուր հազար հայերի առկայության փաստի եւ երկու կիրակնօրյա դպրոց ու երեք պետական մանկական ստեղծագործական կենտրոններում հայոց լեզվի եւ հայրենագիտության խմբակներ ունենալու պարագայում՝ մոտավոր հաշիվներով՝ 5-40 տարեկան ընդամենը 300 աշակերտ են մասնակցում պարապմունքներին: Սա, իհարկե, շատ քիչ է: Հետաքրքրվողների աճի միտումը կարող է հուսադրող լինել, եթե այն չլիներ Հայաստանից շարունակվող գաղթի հաշիվը:

Կրասնոդարում ընդհանրապես հայկական ճարտարապետական եւ մշակութային հետքեր պահպանվել են դեռեւս նախանցյալ դարից: Նախախորհրդային շրջանում այստեղ հայկական դպրոցներ, թերթեր եւ եկեղեցիներ էին գործում: Երբ ես 1999թ. հաստատվեցի այս քաղաքում, այստեղ արդեն կային Հովհաննես Ավետարանիչ եկեղեցին, «Երկրամաս» եւ «ՍԱԸ» թերթերը, «Սաղրուժեստովո» մանկական ստեղծագործական կենտրոնի խմբակները եւ Պաշկովկա թաղամասի փոքրիկ դպրոցը: Մեր՝ նախկինում «Խաչքար» (սույն անվանումով նաեւ ամսագիր հրատարակվեց 2007-2012թթ.), այժմ՝ «Արմատ» դպրոցը բավականին հիմնավոր կառույց է՝ 180-200 աշակերտներով, եռամյա կրթությամբ, սեփական ծրագրերով եւ դասագրքերով: Դպրոցը թեւեւ կոչվում է կիրակնօրյա, բայց աշխատում է շաբաթվա մեջ հինգ օր: Այստեղ դասավանդում են երեք ուսուցիչներ: Աշակերտները խմբավորվում են ըստ տարիքային եւ լեզվի իմացության մակարդակների:

**- Ըստ Ձեզ՝ ի՞նչ խնդիրներ ու մարտահրավերներ ունի այսօր Ռուսաստանում ապրող հայությունը:**

- Նախ, Ռուսաստանի հայությունը բազմաշերտ է, առանձնապես՝ Հյուսիսային Կովկասյան տարածաշրջանի: Ոչ ոքի համար նորություն չէ, որ հայերն այստեղ ապրում են 15-րդ դարից սկսած, եւ ներգաղթը շարունակվում է առայսօր: Արդեն սկսել են մտածել, որ դժվարություններից խուսանալու ու օտարասիրությունը մեր ազգային բնավորության գիծ է: Երեւի Հայկ Նահապետից սկսվեց:

Այստեղ արմատավորված է արդեն 4-7 սերունդ Հայաստանից դուրս ապրողների համար Ռուսաստանը դարձել է հայրենիք, իսկ Հայաստանը լավագույն դեպքում՝ նախնիների երկիր: Բացառություններ կան. հատկապես Ցեղասպանության հետեւանցով Արեւմտյան Հայաստանից գաղթածների շրջանում կան ընտանիքներ, գերդաստաններ, որոնք մի ամբողջ դար ապրելով օտար հողում՝ պահպանում են իրենց ինքնությունը: Նախորդ դարավերջից այս կողմ գաղթած նոր հայերը, որոնց հոսքը դժբախտաբար դեռ շարունակվում է, նորից տարաբնույթ հայացքներ ունեն: Մի մասը փորձում է արագ ինտեգրվել եւ մոռանալ այն ամենը, ինչը խանգարում է լինել նոր երկրի կյանքի լիիրավ մասնիկը, մյուսները ջանում են նոր պայմաններին հարմարվելով հանդերձ՝ պահպանել ազգային կերպը:

Տարբեր են նաեւ մեր դպրոց ընդունվողների շարժառիթները, սակայն միասնական եւ միագիծ է մեր նպատակը, գերխնդիրը՝ արթնացնել կամ առույգ պահել հայկական ոգին, հայի տեսակը եւ հոգեկերտվածքը: Մնացած ամեն ինչ դրանով պայմանավորված դետալներ են: Սփյուռքում հայերենի ուսուցիչ լինելը մեծ, անմնացորդ նվիրում է: Կայացած ուսուցիչը իսկական գաղափարի մարտիկ է, առաջնորդ:

Մարտահրավերները բազմաթիվ են. առաջին հերթին՝ աշխարհաքաղաքացիության շատ հրապուրիչ, թեթեւ եւ առաջին հայացքից միանգամայն ընդունելի գաղափարը, երկրի տնտեսական անկայունությունը, որ մարդկանց ողջ հետաքրքրություններն ու ուշադրությունը սեւեռում է հանապազօրյա հացի հայթաթման շուրջ, ժամանակակից մշակույթի նահանջն իր բուն՝ կրթական եւ դաստիարակական գործառնությունից, նյութական արժեքների հոգեւորին գերադասելու միտումը, աղանդների պառակտիչ ազդեցությունը եւ վերջապես,

հորս խոսքերով ասած՝ մեր անբուժելի ռուսասիրությունը, որը մեզ հեշտությամբ ձուլում է ամենաշատը հենց այս ազգին:

**- Որքանով է դպրոցը մասնակցում հայ համայնքի կյանքին:**

- Կրասնոդարում պարզապես ոչ մի հայկական միջոցառում չի կայանում առանց մեր մասնակցության: «Արմատ» դպրոցն ունի բավական մեծ ճանաչում, համբավ եւ վստահություն: Դրան նպաստում է նաեւ այն հանգամանքը, որ մենք գործում ենք Առաջնորդանիստ եկեղեցու եւ Թեմի առաջնորդարանի հարեւանությամբ, այժմ արդեն՝ բարերար Վարդան Վարդանովի կառուցած չորսհարկանի հոյակերտ շենքում: Հայկական ժողովրդական եւ եկեղեցական բոլոր տոները տոնվում են այս տարածքում, ինչ էլ որ կազմակերպվում է երկրորդ՝ Պաշկովկայի հայկական եկեղեցում, դպրոցում, Ազգային մշակույթի կենտրոնում կամ այլուր, մեր աշակերտներն ու ուսուցիչները միշտ ցանկալի հյուր են կամ մասնակից: Համարյա ամենօրյա աշխատանքային կապերով կապված ենք ՀՀ Սփյուռքի նախարարության եւ Կրթության ու գիտության նախարարության Սփյուռքի հետ կապերի բաժնի հետ, մասնակցում ենք բոլոր ծրագրերին եւ նախագծերին:

**- Գիտե՞ք, որ դուք արժանի արցախցի Լեւոն Հարությունյանի դուստրն եք: Ի՞նչ ազդեցություն ունեցավ այս հանգամանքը ձեր ստեղծագործական կյանքում եւ ընդհանրապես ձեր կյանքում:**

- Ես պարզապես կրկնեմ Թումանյանի խոսքերը, որ իմ ամենամեծ հարստությունը իմ հայրն էր: Ճնորհներն չեն ընտրում, սակայն եթե ընտրության հնարավորություն ունենայի, ես ինձ հայր կընտրեի միայն Լեւոն Հարությունյանին, որովհետեւ իմ հիսունամյա ոչ նստակյաց կյանքում չեմ հանդիպել ավելի հայրենասեր, ավելի ազնիվ, ավելի բարի, ավելի մարդասեր, ավելի աշխատասեր եւ իմաստուն մեկին: Իսկ թվարկածս հատկություններն ինձ համար բացարձակ արժեքներ են: Նրա խորհուրդներով եւ համոզմունքներով եմ առաջնորդվել միշտ՝ մասնագիտություն ընտրելուց մինչեւ հիմա: Ուղղակի կյանքս այնպես է դասավորվել, որ բանասիրության բոլոր բնագավառներով հետաքրքրվել եմ, եւ զուգահեռաբար զբաղվել եմ եւ բանահավաքությամբ, եւ լրագրությամբ, եւ մանկավարժությամբ: Դա մի կողմից խանգարել է, որ որեւէ ոլորտում մնայուն արժեքներ կարողանամ ստեղծել, մյուս կողմից նպաստել է դասավանդման գործին: Ստացվել է այնպես, որ ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտում «Հայ ժողովրդական սգո երգերը» թեմայով գիտական թեզ պաշտպանելուց հետո հեռացել եմ երկրից, եւ Կրասնոդարում նախ սկսել եմ վարել հայոց լեզվի դասընթացները Կոմբասի պետական համալսարանում, ապա, հինգ տարի գրել եմ «Խաչքար» ամսագրի հայկական էջերը: Այնուհետեւ, ի մի բերելով տարիների գրառումներս՝ բանաստեղծությունների մի ժողովածու եմ հրատարակել, սակայն երբեք մասնագիտորեն չեմ զբաղվել գրականությամբ: Եվ վերջապես, հանգրվանելով դպրոցում՝ սկսել եմ զբաղվել ռուսախոս միջավայրում հայոց լեզվի ուսուցման մեթոդիկայով, երկու դասագիրք եմ ստեղծել՝ «Փոքր Միեր» եւ «Մեծ Միեր»: Երբեմն մտածում եմ, որ պետք էր զբաղվել մի բանով եւ այն հասցնել բարձր վարպետության մակարդակի: Դե եղածը եղած է, մենք չենք ապրում այնպես, ինչպես ուզում ենք, այլ՝ ինչպես կարողանում ենք:

Չնայած երբեք չի ասել, բայց գիտեմ, որ հայրս փափագում էր իմ վերադարձը հայրենիք: Եվ ինչքան էլ կարեւոր լինի այն գործը, որ հիմա անում եմ, ես ինձ մեղավոր եմ զգում հայրենիքում չլինելու համար: Հույս ունեմ՝ կկարողանամ ուղղել ակամա սխալս: Եվ ուզում էր, որ շարունակեմ զբաղվել Արցախի բանահյուսությամբ: Առայժմ չեմ հասցնում, չնայած դա իմ հիմնական մասնագիտությունն է: Բայց կարծում եմ՝ կվերադառնամ երիտասարդական նախասիրությանս եւ հորս կյանքի գործին, եթե իհարկե առողջությունս ների, եթե Աստված ժամանակ տա:

**- Ի՞նչ եք կարծում՝ որքանով է այսօր երիտասարդությունը հետաքրքրված տպագիր հրատարակությամբ:**

- Ես դասավանդում եմ մեր դպրոցի ավագ խմբերին (դրանք հիմնականում ռուսախոսներից են կազմված), եւ տեղյակ եմ նրանց հետաքրքրություններին: Բնականաբար, ավելի քիչ են հետաքրքրված, քան քսան տարի առաջ. համոզիչ պատճառներ կան դրա համար: Տեղեկատվություն ստանալու շատ ավելի հրապուրիչ միջոցներ են հայտնվել՝ արագ, ճշգրիտ եւ ծավալուն: Մասշտաբային գրադարանները հավաքվել են մի փոքրիկ, գույնզգույն տուփի մեջ, որը հեշտությամբ կատարում է քո հրամանները: Իմ սերունդը դեռեւս նոստալգիա ունի թղթի հոտի եւ գեղարվեստական գրքի նկատմամբ, բայց երիտասարդները դրա կարիքը չունեն: Սակայն չէի ասի, որ երիտասարդները չեն ընթերցում, ուղղակի ձեւերն են փոխվել եւ ընթերցվող նյութի որակը՝ ցավոք սրտի:

**- Ո՞րն է ձեր ներշնչանքի աղբյուրը:**

- Հայաստան աշխարհը: Ես չեմ տարբերակում Հայաստանն ու Արցախը: Իմ հայրենիքը Հայաստանն է. նրա մեջ մտնում է նաեւ Արցախը: Չեմ ուզում խոսքերով նսեմացնել այն, ինչ կյանքի իմաստ է ինձ համար: Հայրենիքից բարձր եւ կարեւոր ոչինչ չի կարող լինել: Եվ երբ որ նրա երկնքում ամպեր են կուտակվում, ես տառապում եմ: Ուր էլ որ լինեմ, հիվանդանում եմ հոգով եւ մարմնով: Իսկ երբ հուսադրող մի շող է հայտնվում, պատրաստ եմ սարեր շրջել... Ու նաեւ իմ երեխաները եւ իմ աշակերտները, որոնց մեջ ես շարունակվում եմ:

**- Ձեր ամանորյա բարեմաղանքը:**  
- Եթե կարելի է՝ չափածո, որ գրել եմ իմ «Փոքր Միեր» դասագրքի համար:

### ԱՄԱՆՈՐՅԱ ԱՐՈՅԵ

*Արի՛, բարի իմ Նոր տարի՛,  
Աշխարհին բեր շունչ մի բարի,  
Նոր երազանք եւ նոր խոստում,  
Հին երազներ, նոր արթնացում,  
Ամմար, անափ, անհատակ սեր  
Ու կրակվող անշեղ հույսեր:*

*Հայրենիքին մեր հնամյա  
Եվ հավատին մեր նորօրյա  
Նոր ու հզոր լույս պարգեւիր:  
Արարատի վրա լուսեղ,  
Հայաստանի վրա գունեղ  
Բարի՛ք շաղիր այնքան բարիք,  
Որքան հայը ունի տարիք:*

*Եվ Արցախից մինչեւ Սասուն  
Կանաչ լույսով ուղի բացիր՛,  
Արե՛՛ վառիր նոր ու հզոր...  
Ու հիացիր՛ քո արածով,  
Բարի՛, բարի իմ Նոր տարի՛:*

**Հարցազրույցը՝ Հերմինե ԱՎԱԳՅԱՆԻ**

### Ձմեռ պապ. «Թող այլևս սահմանին ոչ մի հայ զինվոր չգոհվի»

Նոր տարվա ամենասպասված հյուրը, հատկապես մանուկների համար, Ձմեռ պապին է, որի գալիստյան հետ կապվում են նրանց երազանքները: Երեւի թե մեզանից յուրաքանչյուրն էլ իր կյանքում երբեք հավատացել է Ձմեռ պապի գոյությանը, նամակներ գրել նրան, սպասել կամուրջի հրաշքին: Նոր տարին համընդհանուր սիրված տուն է:

Գենա Առուշանյանն, արդեն 5 տարի է, աշխատում է՝ որպես Ստեփանակերտ քաղաքի Ձմեռ պապ: Նա մասնակցում է քաղաքի գլխավոր տոնածառի բացման հանդիսավոր արարողությանը, ամառային միջոցառումներին, այցելում է դպրոցներ, մանկապարտեզներ ու տարբեր հաստատություններ, նաեւ տանն է այցելում մանուկներին, հանձնում նվերներ: Գենան սիրով է կատարում Ձմեռ պապի դերը, աշխատում իրական երեւալ, որպեսզի երեխաներն իսկապես հավատան Ձմեռ պապի գոյությանը: Սա էլ, իրավ, դժվար «մասնագիտություն» է, որ ոչ բոլորը կարող են ստանձնել:

Aparaj.am-ը Նոր տարվա շնորհի հյուրընկալեց Ձմեռ պապին եւ փորձեց գտնել մի քանի հետաքրքրող հարցերի պատասխաններ:

**- Ինչպես գիտեք, արդեն մի քանի տարի է՝ Ստեփանակերտ քաղաքի Ձմեռ պապն եք: Մխաված չե՞ք լինի, եթե ասենք, որ դա էլ յուրովի մասնագիտություն է, որը ոչ բոլորը կարող են ստանձնել: Դժվար է արդյոք հանդես գալ՝ որպես Ձմեռ պապ:**

- Ձմեռ պապի դերում հանդես գալով՝ պիտի նախ եւ առաջ կարողանալ շատ նուրբ մոտեցում ցուցաբերել երեխաների հետ շփման ժամանակ: Մի անգույշ քայլ, մի անգույշ արտահայտություն, եւ կարող ես կտրել երեխայի հավատը Ձմեռ պապի հանդեպ: Պետք է գործը անես կատարելապես: Պետք է բոլոր երեխաներին քո ուշադրությունից մի մասնիկ տաս, որպեսզի երեխաները զգան, որ Ձմեռ պապը բոլորին

սիրում է: Երեխաների հետ պետք է խոսել երեխաների լեզվով, նրանց կողմից սիրված հեքիաթների եւ մուլտֆիլմերի հերոսների լեզվով, որպեսզի երեխայի մոտ այն տպավորությունը լինի, որ Ձմեռ պապն էլ հեքիաթից է գալիս: Այս ձեւով՝ հեքիաթը երեխայի աչքին իրական է դառնում: Մեր ժամանակներում շատ կարեւոր է պահել երեխաների հավատը հեքիաթի նկատմամբ: Ձմեռ պապն այդ առաքելությամբ պիտի մանուկներին այցելի:



**- Ժամանակակից երեխաները որքանով են հավատում Ձմեռ պապին ու Նոր տարվա հրաշքին:**

- Իհարկե, ժամանակակից երեխաներին դժվար է ինչ-որ բանով գարմացնել: Մեր ժամանակներում մենք անգամ չգիտեինք, որ մեր ուսուցիչը կամ ուսուցչուհին հաց են ուտում, իսկ հիմա դա ծիծաղելի է: Սակայն ասել, որ այսօրվա երեխաները չեն հավատում Ձմեռ պապին, սխալ կլինի: Իհարկե, շատ-շատերը հավատում են: Դա ես գտնում եմ նրանց աչքերի փայլից, ուրախու-

թյան ճիչերից: Շատ հաճախ նրանք ինձ ամուր գրկում են եւ ասում. «Ձմեռ պապ, ես քեզ շատ եմ սիրում»:

Այս հարցում շատ կարեւոր է նաեւ ծնողների դերը: Յուրաքանչյուր ծնող պետք է իր երեխային պատմի Ձմեռ պապի մասին՝ որպես իրական հերոսի, ով կատարում է նրանց երազանքները:

**- Երեխաներից կամակերտ ստանում ե՞ք, հիմնականում ի՞նչ են խնդրում երեխաները Ձմեռ պապիկից:**

- Իհարկե, առաջ ավելի շատ էին գրում Ձմեռ պապիկին, բայց հիմա էլ կամակերտ ստանում եմ: Երեխաները հիմնականում իրենց կամակերտ փոխանցում են քաղաքային տոնածառի բացման հանդիսավոր արարողության ժամանակ: Հիմա էլ շատ կամակերտ ունեն երեխաների կողմից: Մտածում եմ՝ շատ ավելի լավ կլինի, եթե Ձմեռ պապն իր էջն ունենար համացանցում, որպեսզի երեխաները գրեին նրան, իսկ Ձմեռ պապը պատասխաներ: Առաջիկայում կփորձեմ աշխատել այդ ուղղու-

թյամբ: Երեխաներից ստացած կամակերտ բովանդակությունները հաճախ ման, հաճախ էլ տարբեր են: Ոմանք խնդրում են խաղալիք, ոմանք համակարգիչ եւ այլն: Չեմ կարող մոռանալ անցած տարի ստացած կամակերտից մեկը: Նամակում հասցե ու ազգանուն չկար նշված, միայն երեխայի անունն էր գրված՝ Մարիա: Մարիան խնդրում էր Ձմեռ պապից, որ նա այս տարի հրաշքով տուն բերի իր հայրիկին: Նա գրում էր, որ իրեն ուրիշ բան պետք չէ: Այդ պահին մտածում էի՝ երևել կարողանայի...

**- Իսկ ինչպե՞ս որոշեցիք ընտրել հենց այս «մասնագիտությունը»:**

- Երեւի աշխարհում չկա ավելի բարի եւ ոգեւորիչ բան, քան երեխայի ուրախությունն է: Երեխայի աշխարհը շատ նուրբ աշխարհ է: Ես նրանց հետ շփվելիս միշտ հիշում եմ իմ մանկությունը: Մեր ժամանակ պատերազմ էր, մեր Ձմեռ պապիկները մեզ «մոռացել էին», այլ գործով էին զբաղված: Ես միշտ երազել եմ այդ ուրախությունը, որ մեր ժամանակ մթազնել էր արկերի պայթյուններով, այսօր ինքս պարզեցի երեխաներին: Չեմ կարող բառերով բացատրել զգացողություններս:

**- Ի՞նչ կմտաք Ձմեռ պապը Արցախի ու Արցախի մանուկներին:**

- Ձմեռ պապիկը շատ է սիրում իր Արցախ աշխարհը եւ գիտի, որ մի օր Արցախը կհասնի իր նվիրական երազանքին՝ մայր Հայաստանին վերամիավորմանը, միացյալ Հայաստանի ստեղծմանը: Թող այս Նոր տարում մենք ազգովի մի նոր քայլ անենք դեպի այդ նվիրական երազանքը: Թող 2015-ին ծնված մանուկները իրենց ողջ կյանքի ընթացքում չհիմանան, չսեն պատերազմի մասին: Թող սահմանին այլևս ոչ մի հայ զինվոր չգոհվի, եւ խաղաղությունը հատկապես:

*Հարցազրույցը՝ Հերմինե Ավագյանի*

### Համշենցի հայերի Ամառը /Ծաղկըմուտ-ծաղկամուտը/ նշելու ավանդույթը

Տրապիզոնի նահանգում նրանք հաստատվեցին 8-րդ դարում: Օսմանյան իշխանությունները նրանց հանդեպ իրականացրին բռնի մահապատժի պատճառով քաղաքակառուցություն: 1890-ականներից մինչեւ 1923 թվականներն ընկած ժամանակահատվածում համշենցի հայերը նույնպես ենթարկվեցին ցեղասպանության, իսկ վերապահները սփռվեցին աշխարհով մեկ՝ ձեւավորելով համշենական սփյուռքը:

Համշենցի հայերի Նոր տարին համընկնում է Յուլիան օրացույցի ժամանակների հետ: Նրանք երբեմն նշել են նաեւ Կաղանդը: Հայկաճորում բնակվող համշենցի հայերը իրար շնորհավորելիս ասել են. «Շնորհավոր Նոր տարի եւ բարի Կաղանդ»: Միմյանց շնորհավորելուց գատն շնորհավորում էին նաեւ գոմերն ու անասունները, մթերանոցները, եւ բոլորին նոր բախտ ու հաջողություն մաղթում:

Համշենցի հայերը դեկտեմբերի 31-ի լույս հունվարի 1-ի գիշերն անվանում են Ծաղկամուտի-Ծաղկըմուտի գիշեր: Համշենցիները հավատում էին, որ այդ գիշեր ջրերը մի ժամի չափ կանգնում են եւ ոսկի ու արծաթ դառնում /այս հավատալիքը տարածված էր հայկական մի շարք ազգագրական շրջաններում - ՀԱ/։ Բայց այդ րոպեին ջրի մոտ մարդու աչքերին մի սարսփելի տեսարան է երեւում, եւ նա փախչում է ջրի մոտից: Եվ եթե յոթ անգամ ջրի վրայով չանցնի, «Կոնտուրը կփայի նրան»:

Տարեմուտի ավանդական ծիսական համակարգի մեջ որոշակի տեղ էր զբաղեցնում նաեւ ծառի պաշտամունքը: Համշենցիների շրջանում այս պաշտամունքի վերաբերյալ պահպանված մի հավատալիքի համաձայն՝ Ծաղկամուտի-Ծաղկըմուտի գիշերը ծառերը ծուր են անում եւ երկրպագություն տալիս Արարչին: Ծաղկամուտի-

Ծաղկըմուտի սեղանին դրվել են ամեն տեսակ պասսավոր կերակուրներ: Հատուկ ուշադրություն է դարձվել կերակրատեսակների քանակին, որն ուներ նաեւ սրբազան իմաստ: Նախապատվությունը տրվել է յոթ թվին: Յոթ տեսակի այդ կերակուրներում գերակշիռ թիվ են կազմում հատիկային կերակուրները, դրոմի տապակած միջուկով խմորեղենները: Ընտանիքի անդամների



թվով նախօրոք փռում պատվիրվել է 7 տեսակի խմորեղեն, որոնցից մեկի մեջ դրվել է բախտավորության նշան: Երեկոյան՝ մայրամուտից հետո, համշենցի հայերը հատուկ ընտանեկան ճաշկերույթով նշել են Նոր տարին:

Եղենու փոխարեն, որպես տոնական ծառ, օգտագործվել է երջանկություն բերող ձիթենու ճյուղը: Բացի ձիթենու ճյուղից, որպես տոնական ծառ, կիրառվել է նաեւ

ծիրանեկի, իսկ եղենին, իբրեւ տոնական ծառ, սկսել են կիրառել 1900թ., որը գարդվել է ճեղքված ընկույզներով, չորացած թզով ու խնձորներով: Ծաղկամուտի-Ծաղկըմուտի /Նոր տարվա/ սեղանին պարտադիր էր չամիչով համեմված խաշած եգիպտացորենի հատիկը եւ խաշիլը /արմանը/, որը պատրաստվում է եգիպտացորենի ալյուրից, կաթով ու բուսական յուղով: այն

մատուցվում է մածուկով: Տոնական սեղանի պարտադիր ուտեստներից էին քեստոնա դդումը, դդումով խորոզը, խորոված դդումով կարկանդակը, ցորեն հացը, բաղուլման՝ սաջի վրա եփած տափակ հացը, քարեհացը, որը քարի մեջ էին եփում, փունջիստը, չիրը, լոբեան, լախտը, բանջարով ապուրը, պասուց ճաշը, սիսեռը, մեղրով համեմված ընկույզի միջուկը: Համշենցի հայերը ոչ կծու կերակուր են ուտում,

ոչ էլ թթու խոսք ասում միմյանց: Անցումային այդ օրերին յուրաքանչյուր չար խոսք կարող էր չարիք բերել ամբողջ տարի:

Ընդունված է նաեւ գծովածներին հաշտեցնել թե՛ տանը, թե՛ հասարակական միջավայրում: Տոնական սեղանի կարեւոր գարդերից էր նաեւ խնձորը: Ըստ բանահավաք Բ. Թոռլաբյանի հարողորած տվյալների՝ խնձորներից մեկի մեջ տան տիկինը թաքցրել էր բախտի նշան /մի մետաղադրամ/: Որոշ ազգագրական շրջաններում մետաղադրամի փոխարեն օգտագործել են չորացած մրգեր /ՀԱ/։ Ընտանիքի գլխավորը, խնձորը կտրելով, բաժանում էր բոլորին: Ում ընկեր, նա համարվում էր երջանիկ եւ հաջողակ ամբողջ տարվա ընթացքում: Ըստ ավանդության՝ երջանկացած անձը երջանկություն եւ հաջողություն էր բերում ոչ միայն իր ընտանիքին, այլ նաեւ այն ընտանիքին, ում տանը Նոր տարում /Ծաղկամուտում-Ծաղկըմուտում/ առաջին անգամ ոտք դներ: Ռուսական միջավայրում նա կոչվում էր առաջին այցելու /ноаазнук/: Հայերի մեջ առաջին այցելուի բարեբերության հավատը պահպանվել է մինչեւ օրս:

Հարկ ենք համարում նշել, որ բախտի նշանի տեղ մարդն ուներ որոշ պարտականություններ, որ պետք է կատարեր մինչեւ տարվա վերջ: Նրա պարտականությունների մեջ էին մտնում տան անասուններին ծիսական ուտեստով կերակրելը, աղբյուրից ջուր բերելն ու տան ամանները լցնելը եւ այլն:

Մեր օրերում համշենցի հայերը վերաբնակեցված վայրերում Նոր տարվա սեղանին՝ ժամանակակից ուտեստների հետ մեկտեղ դնում են նաեւ վերոնշյալ ավանդական ուտեստները:

*Հովիկ ԱՎԱՆԵՍՈՎ*

Եթե նյութապես ապահով լինեք, կարող եմ անգամ 20 երեխա ունենալ...



Քաջաթաղի շրջկենտրոն Բերձորից 35 կիլոմետր հեռավորության վրա է գտնվում Լորաշենիկի համայնքը, որտեղ 10 անչափահաս երեխաների հետ բնակվում են Շաբոյան ամուսինները: Ընտանիքի մայրը՝ Աննան, ընդամենը 30 տարեկան է և ժպիտով է պատմում այն մասին, որ երբեք էլ չի պատկերացրել, որ բազմազավակ մայր կլինի: Աննան ամուսնացել է 14 տարեկանում: Ինչպես ինքն է պատմում, ամուսինն իրեն փախցրել ու տարել է Քաջաթաղի հեռավոր մի գյուղ, որպեսզի հնարավոր չլինի գտնել իրենց: «Երբ ամուսինս ինձ փախցրեց, կարելի է ասել, դեռ երեխա էի: Մինչ այդ իրար չէինք սիրել, ընկերություն էլ չէինք արել,- ջերմ ժպիտով իր ամուսնության մասին պատմում է Աննան և գրկելով 10-րդ բալիկին՝ Միլենային, ով 7 ամսեկան է, շարունակում է իր պատմությունը: «Ավզբուն չեմ սիրել ամուս-

Աննան ու ծիծաղում: Երիտասարդ մայրիկն իր ընտանիքով ապրում է սեւացած պատերով, կիսադատարկ 3 ննջասենյակ և մեկ հյուրասենյակ ունեցող տանը, որը պետական միջոցներով կառուցվել է հատկացվել է ընտանիքին 10 տարի առաջ՝ 6-րդ զավակի ծնվելու կապակցությամբ: Աննայի խոսքերով՝ շրջվարչակազմում խոստացել են գումար տրամադրել տան պատերը սպիտակեցնելու համար: Իսկ նոր, ավելի հարմարավետ տուն ընտանիքը կունենա, եթե եւս երկու երեխա ունենան. «Նոր տուն ունենալու մասին դեռ չեմ ստածել. մեզ համար կարելու էր երեխաներն առողջ լինեն»,- պատմում է Աննան և աղջիկներից մեծին՝ Սաթենիկին, հորդորում է փոխել ամենափոքրի շորերը: Երիտասարդ մայրիկը կարելու է երեխաների առողջությունը և նշում, որ տան



նուս: Ամուսնությունից որոշ ժամանակ անց եմ սկսել սիրել, իսկ հիմա կյանքս առանց նրա չեմ պատկերացնում»: Աննայի պատմելով իր հարազատներից է ոչ մեկը չի պատկերացրել, որ Աննան բազմազավակ մայրիկ կդառնա: «Ամուսինս ընտանիքի միակ երեխան է եղել, եւ ամբողջ կյանքում երազել է մեծ ընտանիք ունենալու մասին: Ես էլ դեմ չեմ եղել: Ինձ համար շատ հեշտ է եղել, ամուսնուս մայրն ինձ ամեն ինչով օգնում էր: Մի քանի տարի է, ինչ նա կյանքից հեռացել է: Հիմա էլ ինձ օգնում են երեխաներս»,- պատմում է Աննան: Աննայի ամուսինը՝ Վիրաբը, Արցախյան պատերազմի մասնակից է, իսկ մշտական բնակության համար Քաջաթաղ է տեղափոխվել 20 տարի առաջ: Աննան Վիրաբի երկրորդ կինն է, իսկ առաջին ամուսնությունից Վիրաբի երկու դուստրերը, որոնք Աննայից 7 տարով են փոքր, մեկ հարկի տակ են ապրել. «Ես ու ամուսնուս երկու դուստրերը, այսպես սասծ, միասին ենք մեծացել: 3 տարի առաջ ամուսնուս մեծ աղջկան ենք ամուսնացրել, ով արդեն 2 բալիկ ունի: Կարելի է ասել՝ ես արդեն երկու թոռ ունեմ»,- ասում է

ամսական եկամուտը կազմում է 150 000 դրամ: 50 000-ն իր աշխատավարձն է և եւ ներկայումս փոխանցվում է ապառիկով ձեռք բերված վաճառքի մեքենայի, հեռուստացույցի և բազմոցի դիմաց: «Երեխաների 100.000 նպաստով սնունդ ենք առնում՝ հարեան գյուղի խանութից, բայց 100 000-ը չի բավականացնում, եւ ստիպված պարտքով ենք վերցնում ու մարում հաջորդ ամսվա նպաստով»: 10 անչափահաս երեխաներից 7-ը դպրոց են հաճախում: Աննան մտահոգվում է, որ չի կարողանում երեխաներին հագուստ կամ կոշիկ գնել (կոշիկները ճանապարհների բացակայության պատճառով շատ շուտ են պոկվում): «Կոշիկ չունենալու պատճառով՝ սեպտեմբերին երեխաներին չեմ կարողացել դպրոց ուղարկել: Շրջվարչակազմը, ծանոթ լինելով ինչորին, 40 000 դրամ է հատկացրել, ինչը միայն բավականացրել է գրեական պիտույքների ձեռք բերմանը»: Երեխաներից ավագը՝ Ավետիքը, Աննայի աջ ձեռքն է և հոր բացակայության ժամանակ օգնում է երիտասարդ մայրիկին: «Երեխաներս դպրոցում լավ են սովորում: Ես եմ

ինձ վատ զգում, որ ժամանակ չեմ ունենում երեխաների կրթությամբ զբաղվելու: Իրենք իրենք ուժերի չափով սովորում են եւ վատ չեն սովորում: Դպրոցի միջոցառումների երեխաներն ընդգրկված են լինում. կարողանում են լավ երգել, ասումներ: Հակոբին, ով մաթեմատիկա առարկային լավ է տիրապետում եւ առհասարակ լավ է սովորում, դպրոցի տնօրինությունն ուզում է ուղարկել «Կենդուրու» մրցույթին: Ես կրթություն չեմ ստացել, բայց ուզում եմ, որ երեխաներս կրթություն ստանան»,- ասում է Աննան: Աննան հպարտանում է իր բալիկներով ու չի բացառում, որ առաջիկայում էլ իր բալիկներ կունենան. «Եթե մեր պայմանները նորմալ լինեն, ես կարող եմ նաեւ 20 երեխա ունենալ: Թող նրանք, տեսնելով մեր համերաշխ ընտանեկան կյանքը, մեծանան սիրով ու ջերմությամբ: Կարելու է, որ նրանք լավ մարդիկ դառնան ու ազգին պիտանի լինեն»:

մարի տակ, իսկ մնացած 6-ը ծնվել են հիվանդանոցում: Այս Ամանորին Աննան, ինչպես միշտ, պատրաստվում է սեղան բացել. «Ամեն ինչ թանկացել է, բայց միեւնույն է՝ երեխաներիս համար փորձելու եմ սեղան պատրաստել: Երջիկ կառնեմ, քաղցրեղեն, միրգ: Մի տարի լավ, մի տարի վատ, բայց անպայման նշում ենք Նոր տարին: Հյուրեր միշտ ունենում ենք: Այս տարի էլ երեխաները որոշել են նամակ գրել Ձմեռ պապին: Ես թանկացումներին մեծանակ նամակն էր պակասում»,- նեղսրտում է Աննան: Հավատալով Ամանորի հրաշքին՝ Շաբոյանների 10 անչափահաս երեխաները մեզ փոխանցեցին ամանորյա ցանկությամբ մի նամակ՝ ակնկալելով, որ այն մեր միջոցով կհասնի Ձմեռ պապիկին: Նամակում երեխաները Ձմեռ պապիկից համակարգիչ են խնդրում:



Աննային խնդրեցինք մեզ ցույց տալ ննջասենյակները, որտեղ երեխաներն են քնում: Ննջասենյակում տեղադրված երկու մահճակալները ցույց տալով՝ Աննան նշեց, որ դրանցից մեկին 4 երեխաներին է քնեցնում, իսկ երկուսին՝ մյուս մահճակալին: Երկու մահճակալ էլ մի սենյակում էր տեղադրված, այնտեղ նույնպես երկու-երկու են քնում: Ննջասենյակներում չկար է ոչ մի պահարան, որտեղ երեխաների իրերը հնարավոր կլինեք դասավորել: Աննան չխոսեց այդ ամենի մասին, պատկերն ինքնին խոսում էր: Ինչպես տեղեկացանք, Նորաշենիկում այսօր առկա է ոռոգման և խմելու ջրի խնդիր: Համայնքի ղեկավար Զաչիկ Պողոսյանի խոսքերով՝ ընդամենը 500 մ խողովակ է անհրաժեշտ, որպեսզի Շաբոյանների բազմազավակ ընտանիքը մշտական խմելու ջուր ունենա:

Իրականում Շաբոյանների ընտանիքի ամենամեծ կարիքը համակարգիչը չէ (ինչը, որ խնդրում են Ձմեռ պապիկից նամակում). նրանք ընտանիքն ապրում է սոցիալապես անապահով վիճակում: Ցանկացած օգնություն այս ընտանիքի համար եական է, բայց Ամանորին ընդառաջ կարելուս այն է, որ երեխաների ամանորյա ցանկությունն իրականություն դառնա: Մենք խոստացել ենք նամակը փոխանցել Ձմեռ պապիկին և կատարում ենք մեր խոստումը: Այնպես որ, սպասում ենք Ձմեռ պապիկի կամ պապիկների արձագանքին: 3.9. - Մինչ այս նյութի հրատարակումը՝ Շաբոյանների բազմանդամ ընտանիքի մասին պատմող լուսանկարներ, ինչպես նաեւ երեխաների ձեռքով գրված նամակը հրատարակել ենք մեր կայքում, և արդեն կան արձագանքներ: Հույս ունենք, որ Շաբոյան-



Ավետիք, Սաթենիկ, Հակոբ, Նարե, Էռնեստ, Սողոմոն, Մանե, Մանուկ, Անի, Միլենա. այս երեխաներից 3-ին Աննան տանն է ծննդաբերել, մեկը՝ Անին, ծնվել է Նորաշենիկ-Բերձոր ճանապարհին՝ Ախմուդովի կա-

ների ընտանիքի պատմությունը կետաբերի շատերին և կգտնվեն մարդիկ, ովքեր կցանկանան աջակցել այս ընտանիքին:

ԱՆԻ ԱՍՏՅԱՆ

Խմբագիր Ալեսյա Բեջանյան